$$\begin{bmatrix} e_{Ot} = -0{,}010233u_{Ot} \\ e_{Mt} = 0{,}119335e_{Ot}+0{,}044522uMt \\ e_{Ft} = 1{,}13496e_{Ot}+1{,}1803e_{Mt} + 6{,}18225u_{Ft} \end{bmatrix} \Rightarrow \begin{bmatrix} e_{Ot} = -0{,}010233u_{Ot} \\ e_{Mt} = -0{,}001221u_{Ot}+0{,}044522uMt \\ e_{Ft} = -0{,}013055u_{Ot} + 0{,}052549u_{Mt} + 6{,}18225u_{Ft} \end{bmatrix}$$

Մեկնաբանենք ստացված արդյունքները՝ համաձայն ստացված համակարգի՝ «Եվրոպական» նավթի շուկայում տեղի ունեցող գների տատանումները պայմանավորված են նավթի շուկայի ներքին գործոններով, որոնցից կարելի է առանձնացնել նավթի առաջարկի կամ պահանջարկի փոփոխությունները, փոխարինիչ ռեսուրսների գները, առք ու վաճառքի իրականացման պայմանագրային բնույթը և այլն: Իր հերթին նավթի շուկայում տեղի ունեցած «շոկերը»(u_{Ot}) իրենց ազդեցությունն են թողնում փոխարժեքի կուրսի(e_{Mt}) վրա, և եթե 2-րդ հավասարման մեջ e_{Ot}-ի փոխարեն տեղադրենք 1-ին հավասարման արժեքը, ապա կտեսնենք, որ փոխարժեքի կուրսը տատանվում է նավթի գների տատանման հակառակ ուղղությամբ ($-0{,}0012211u_{Ot}$): Փոխարժեքի կուրսի վրա, իհարկե, ազդեցություն են թողնում մի շարք տնտեսական, քաղաքական, բնակլիմայական և այլ երևույթներ, որոնք «ներառված» են u_{Mt}-ում: Քանի որ ՀՀ բնական գազի սպառման ծավալները համաշխարհային գազի սպառման ծավալների համեմատ աննշան են, հասկանալի է, որ հայկական շուկայում տեղի ունեցող «շոկերը»(u_{Ft}) գրեթե ազդեցություն չեն ունենա նավթի գների կամ փոխարժեքի կուրսի տատանումների վրա: Բայց համաշխարհային շուկայում տեղի ունեցող փոփոխությունները (u_{Ot}, u_{Mt}) զգալի ազդեցություն են թողնում գազի սպառման վրա ՀՀ-ում(e_{Ft}): Այդ իսկ պատճառով 3-րդ հավասարման գործակիցները(*$-0{,}013055u_{Ot}$, $0{,}052549u_{Mt}$, $6{,}18225u_{Ft}$*) մեծ են:

Եզրակացություն: Հետազոտելով 2010–2017թթ գազի ծախսի դինամիկան Գորիս քաղաքում և Սյունիքի մարզում, ինչպես նաև ուսումնասիրելով մի շարք գործոններ, ինչպիսիք են բնակչության թիվը, գազի խոշոր սպառողների առկայությունը տարածաշրջանում, բնական գազի սակա-

գների փոփոխությունը, փոխարժեքի տատանումները, ինչպես նաև նավթի և բնական գազի համաշխարհային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունները, կառուցվել են մոդելներ, որոնց միջոցով փորձել ենք բացատրել բնական գազի ծախսի փոփոխության պատճառները Սյունիքի մարզում և Գորիս քաղաքում: ARIMA մոդելի նպատակն էրգնահատել- բնական գազի ծախսի փոփոխությունը բնակչության վարքագծից, օդի ջերմաստիճանից և բնական գազի բացարձակ և փոփոխուն անկմանճնշումներից կախված: Մասնավորապես, օդի ջերմաստիճանի 1°C աճը, այլ հավասար պայմաններում, բերում է գազի ծախսի նվազմանը միջինում7 մ³-ով: Այլ հավասար պայմաններում, գազի փոփոխուն ճնշման աճը 1 բանվորական մթնոլորտով բերում է գազի ծախսի աճին միջինում28 մ³-ով, իսկ գազի բացարձակ ճնշման աճը 1 բանվորական մթնոլորտով բերում է գազի ծախսի նվազմանը26 մ³-ով: Սակագների, ինչպես նաև նավթի և բնական գազի համաշխարհային շուկաներում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը բնական գազի ծախսի վրա ներկայացվում է VAR/SVAR մոդելների միջոցով, որոնք թույլ են տալիս պատճառահետևանքային կապ ստեղծել այդ փոփոխականների միջև: SVAR մոդելի արդյունքները վկայում են, որ 2014թ-ի վերջում նավթի շուկայում տեղի ունեցած գների անկումը մոտավորապես 1,5 տարի հետո իր ազդեցությունն ունեցավ ՀՀ-ի վրա[8] *(Նկար 2)*:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Оборудование для сжиженных углеводородных газов / Под ред. Е.А. Карякина: справочник. Саратов: Газовик, 2015. 736 с. ISBN 978-5-9758-1552-1.
2. Государственный комитет СССР по стандартам: «Правила измерения расхода газов и жидкостей стандартными сужающими устройствами» РД 50-213-80, М.: Изд-во стандартов, 1982.
3. *Дятлов, В. И. Михайлов В. М.* Оборудование, эксплуатация и ремонт магистральных газопроводов, М.: «Недра», 1990.
4. *Котляр И.Я., Пиляк В.М.* Эксплуатация магистральных газопроводов.М.: «Недра», 1971.
5. *Gregory Mankiw N.,* Macroeconomics, 7th Edition, Worth Publishers, Chapter 9–Chapter 12. PP. 257–372.
6. Quantitative Macroeconomic Modeling with Structural Vector Autoregressions – An EViews Implementation S. R. Pagan and J. Restrepo, September 19, 2016.
7. EVIEWS 9 USER's GUIDE II, Chapter 39. PP. 643–693.

[8] C(1) = -0.010233 և C(3) = 0.044522 գնահատված գործակիցները ըստ z-statistics–ի վիճակայնորեն նշանակալի չեն, որը, ինչպես նշվեց, պայմանավորված է նրանով, որ նավթի գների և փոխարժեքի կուրսի վրա բազմաթիվ գործոններ են ազդում, այնինչ դիտարկված մոդելում հիմնական նպատական է եղել ցույց տալ գազի ծախսի կախումը արտաքին աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ: Դրվում է վարկած(H_0), որ C(1) – C(6) գործակիցները հավասար չեն 0: Տվյալ դեպքում հավանականությունը, որ C(1)-ը, C(3)-ը 0 են, 60% է:

ФАКТОРНЫЙ АНАЛИЗ РАСХОДА ПРИРОДНОГО ГАЗА. ПРИЧИНЫ ИЗМЕНЕНИЯ РАСХОДА В СЮНИКСКОМ РЕГИОНЕ

Т. С. Карамян, А. Аракелян

АННОТАЦИЯ

В данной работе были сконструированы модели, с помощью которых, с одной стороны, была показана связь расхода природного газа с поведением человека, с составляющими расхода, а именно: абсолютное давление и перепад давления на сужающем устройстве, с климатом (температура) и с другими факторами (естественный и механический прирост населения, тарифы и цены на продаваемый газ, а с другой – влияние внешнего мира на расход газа в Армении.

Основной целью работы является построение моделей, которые покажут и объяснят причины измены расхода газа и помогут найти факторы-рычаги, которые имели наибольшее влияние на изменение расхода природного газа, с помощью которых можно оптимизировать управление расходами в системе газоснабжения.
Ключевые слова: природный газ, модели “ARIMA, VAR, SVAR”, декомпозиция Холеского, Impulse Response.

FACTOR ANALYSIS OF NATURAL GAS CONSUMPTION. THE REASONS OF A CHANGE IN CONSUMPTION IN SYUNIK PROVINCE

T. Qaramyan, A. Arakelyan

ABSTRACT

In this research work ARIMA and SVAR models were created to show the “micro” and “macro” factors that affects the gas consumption in Armenia. First, we approach the problem by the microeconomic side seeking the reasons of the consumption change that may be connected with the change of human behavior or preferences, climate change, change in some technical parameters or change in tariffs and price-setting of the gas. As a result of the research, we found out that the prices of gas was the main reason for these changes. Then we continue our research at the macroeconomic level adding the external influence of the outer world on the gas consumption in Armenia. By using the expression “external influence” we mean the impact of the change in Brent oil futures market, exchange rate changes and other processes connected with the oil(gas) sector. As a result, it was found out that the recent changes in Armenian gas consumption market, in particular the decline in prices of gas, was the impact of the decline in prices in Brent oil market at the end of 2014. It took approximately a year and a half to meet the influence of the outer world.

Main reason of this research is to build econometric models that will show and explain the reason of the resent change in gas consumption in Armenia andfind the most important leverage factors, with which the cost management of the gas supply systemcould be optimized.
Keywords: naturalgas, “ARIMA, VAR, SVAR” models, Cholesky decomposition, Impulse Response.

ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

Լ. Ա. Քոչարյան

УДК 368.5

Поступила: 15.04.2019г.
Сдана на рецензию: 16.04.2019г.
Подписана к печати: 10.05.2019г.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
levonkocharyan@outlook.com

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում երկար տարիներ փորձ է արվել ներդնել գյուղատնտեսական ապահովագրության համապարփակ կամ պիլոտային ծրագրեր: Մշակվել են տարբեր հայեցակարգեր, սակայն մինչև 2017 թվականը հնարավոր չի եղել իրականացնել այդ ծրագրերը: 2017 թվականին Վերականգնման վարկերի բանկը՝ «KfW»-ն, ՀՀ Կառավարությանը հատկացրել է 5,339,000 Եվրո՝ ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերից ապահովագրության համակարգի մշակման և ներդրման համար: Մշակվել է «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» ծրագիրը, համաձայն որի 2019-24 թվականներին նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական ապահովագրության պիլոտային ծրագիր:

Հիմնաբառեր՝ ապահովագրություն, գյուղատնտեսություն, ռիսկեր, մշակաբույս, աղետ:

Սույն հոդվածում կքննարկվեն վերոնշյալ ծրագրի ներդրման առանձնահատկությունները, խոչընդոտները, խնդիրները, հեռանկարները, ինչպես նաև ազդեցությունը ՀՀ ապահովագրական շուկայի վրա:

2017 թվականից սկսած KfW բանկի ֆինանսավորմամբ և պատվերով շվեյցարական MF Strategy Sarl ընկերությունը մշակել է ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագիր: Մշակմանը մասնակցել են ներկայացուցիչներ և փորձագետներ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարությունից, ՀՀ Կենտրոնական բանկից, ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններից և այլն: Անցկացվել են մի շարք հարցազրույցներ գյուղացիների և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ, հետազոտվել են ՀՀ-ում առկա վիճակագրական

տվյալները, կլիմայական պայմանները, որի արդյունքում նախագծվել է պատրաստի ծրագիր:

Ապահովագրության լավագույն մեխանիզմ է ընտրվել «**արտադրական ծախսերի**» հիման վրա ապահովագրությունը: Այսինքն, հաշվի են առնվում 1 հա այգի մշակելու համար անհրաժեշտ ծախսերը՝ ներառյալ ոռոգման, աշխատուժի, մշակման, պարարտանյութի և այլ ծախսեր. Արդյունքում ստացված թիվը ավելանում է 20% կանխատեսվող շահույթով, և սահմանվում են **ապահովագրական գումարները**՝ յուրաքանչյուր մշակաբույսի համար 4 տարբերակով, որոնք կներկայացվեն հոդվածի վերջում: Պատահարից հետո համապատասխան որակավորում ստացած անձը՝ փորձագետը, հաշվարկում է այգու վնասի տոկոսը, որն էլ կիրառելով ապահովագրական գումարի նկատմամբ, ստացվում է հատուցման ենթակա գումարը: Ստորև օրինակով ներկայացնենք վնասի պարզ հաշվարկը.

Ապահովագրվել է 2 հա խաղողի այգի՝ յուրաքանչյուր հեկտարի համար 1,200,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարով: Կարկուտի արդյունքում վնասվել է այգու բերքի 30%-ը: Հատուցման ենթակա գումարը կկազմի՝ 1,200,000 x 30% = 360,000 ՀՀ դրամ: Այս գումարից կնվազեցվի չհատուցվող գումարը՝ ֆրանշիզան, և մնացորդը կփոխանցվի որպես հատուցում:

KfW բանկի կողմից հատկացված միջոցներով պետությունը՝ ի դեմս ՀՀ Գյուղատնտեսության նախարարության, սուբսիդավորելու է ապահովավճարների 50 կամ 60%-ը՝ կախված ընտրված ռիսկից: Այսինքն, ապահովագրավճարի մի մասը վճարելու է գյուղացին, մյուս մասը՝ պետությունը [1]:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 5 տարով՝ տարեցտարի ավելացնելով ապահովագրության ենթակա մշակաբույսերի տեսակները և ապահովագրվող ռիսկերը: Այսպես, առաջին տարում նախատեսվում է ապահովագրել խաղողի և ծիրանի այգիները այն մարզերում, որտեղ աճում է խաղող և ծիրան: Ռիսկերն են՝

1. կարկուտ և հրդեհ,
2. գարնանային ցրտահարություն:

Առաջին տարում նախատեսվում է ապահովագրել 1,162 հատ կամ 1,978 հա այգի: 5 տարվա ընթացքում նախատեսվում է ապահովագրել 63,667 հա այգիներ: Նշենք, որ ՀՀ-ում կա 14,949 հա խաղողի այգիներ [2], որից 5,701 հա-ն կամ 38%-ը նախատեսվում է ապահովագրել: Ստորև Աղյուսակ 1-ով ներկայացնենք ապահովագրության ենթակա մշակաբույսերը՝ հա-ներով՝ ըստ ՀՀ տարածքում փաստացի առկայության:

Աղյուսակ 1. *Ապահովագրության ենթակա մշակաբույսերը՝ ըստ ՀՀ տարածքում փաստացի առկայության:*

Մշակաբույս	*Ապահովագրվող հա*	*Փաստացի հա*	*Ապահովագրվող հա տոկոսը փաստացի հա նկատմամբ*
Խաղող	5,701	14,949	38%
Ցորեն և գարի (աշնանացան և գարնանացան)	43,883	118,449	37%
Կարտոֆիլ	4,764	22,062	21.5%
Խնձոր	2,619	20,762 (կորիզավոր պտուղների այգիներ)	
Դեղձ	1,379		44.8%
Սալոր	548		
Ծիրան	4,773		
Ընդամենը	**63,667**	**181,222**	**35.1%**

Աղյուսակից երևում է, որ ընտրված 7 մշակաբույսերի ցանկատարածությունների ընդամենը 35.1%-ն է նախատեսվում ապահովագրել պիլոտային ծրագրի շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովագրական ծածկույթ տրամադրել 35,675,394,812 ՀՀ դրամ ապահովագրական գումար ունեցող այգիներին: Այս թիվը գոյացել է տարբեր հարցազրույցների հիման վրա փորձագետների և գյուղացիների տրամադրած տվյալներով: Ինչպես արդեն ներկայացրել ենք հոդվածում, ապահովագրական գումարը ձևավորվում է արտադրական ծախսերի և կանխատեսվում 20% շահույթի հիման վրա, հետևաբար կարելի է ենթադրել, որ ՀՀ-ում 63,667 հա պտուղ ստանալու համար ծախսվում է 35,675,394,812 ՀՀ դրամ կամ մոտ 72,806,928 ԱՄՆ դոլար:

Առաջին տարվա ընթացքում կանխատեսվող ապահովագրավճարը կազմում է 174,012,700 ՀՀ դրամ, իսկ 5 տարիների ընթացքում ընդամենը՝ 6,569,768,115 ՀՀ դրամ կամ մոտ 13,407,690 ԱՄՆ դոլար: Ապահովագրական սակագնի միջին չափը կստացվի 13,407,690 / 72,806,928 = 18%, ինչը չափազանց բարձր սակագին է ապահովագրության այլ տեսակների, ինչպես նաև գյուղատնտեսական ապահովագրության միջազգային փորձի համեմատ: Հաշվի առնելով, որ ապահովագրավճարների մոտ կեսը սուբսիդավորվելու է պետության կողմից՝ գյուղացու վրա ընկնող միջին սակագինը կկազմի 9%:

2018թ.-ին ՀՀ բոլոր 6 ապահովագրական ընկերությունների կողմից հավաքագրվել է 41,016,799,000 ՀՀ դրամ ապահովագրավճար [3]: Եթե համարենք, որ ապահովագրավճարի այս չափը չի փոխվի, ապա կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական ապահովագրությունը 5 տարիների ընթացքում ընդամենը հավաքագրված ապահովագրավճարների ծավալի վրա ազդելու է **3.2%-ով:**

Հարկ է նշել, որ **60%** սիմվոլիկ վնասաբերության դեպքում (ինչը շատ ավելի ցածր է, քան միջազգային փորձն է վկայում, օրինակ՝ Վրաստանում 2018-ին եղել է 90% վնասաբերություն) գյուղատնտեսական ապահովագրության այս ծրագիրը ՀՀ ապահովագրական շուկայի վրա ունենալու է բացասական ազդեցություն՝ 176,259,737 ՀՀ դրամի չափով: Ստորև Աղյուսակ 2-ով ներկայացնենք հիմնավորումը.

Աղյուսակ 2. *Գյուղատնտեսական ապահովագրության պիլոտային ծրագրի թվային գնահատականներ:*

	2019	***2020***	***2021***	***2022***	***2023***	*ԸՆԴԱՄԵՆԸ*
Համախառն ապահովագրավճար	174,012,700	787,058,774	1,313,693,624	1,800,223,219	2,494,769,693	6,569,768,115
Վերաապահովագրական վճար (90%)*	156,611,430	708,352,897	1,182,324,262	1,620,200,897	2,245,292,724	5,912,782,209
Սեփական պահում (10%)	17,401,270	78,705,877	131,369,362	180,022,322	249,476,969	**656,975,801**
Վերաապահովագրական միջնորդավճար 26%	40,718,972	184,171,753	307,404,308	421,252,233	583,776,108	1,537,323,374
ԳԱԱԳ բրոքերային միջնորդավճար 2.5%*	3,915,286	17,708,822	29,558,107	40,505,022	56,132,318	147,819,555
ԳԱԱԳ անդամավճար 5%	-	78,705,877	131,369,362	180,022,322	249,476,969	639,574,531
ԳԱԱԳ ֆիքսված վճար	85,260,000	-	-	-	-	85,260,000
Ապահովագրավճարը նվազեցումներից հետո	-31,055,044	166,462,931	277,846,201	380,747,211	527,643,790	**1,321,645,089**
Վնասաբերություն՝ 60%-ի դեպքում	104,407,620	472,235,264	788,216,174	1,080,133,931	1,496,861,816	3,941,860,869
Վերաապահովագրական	93,966,858	425,011,738	709,394,557	972,120,538	1,347,175,634	3,547,674,782

հատուցումներ (90%)						
Ապահովագրական հատուցումներ (10%)	10,440,762	47,223,526	78,821,617	108,013,393	149,686,182	394,186,087
Վնասի կարգավորման ծախս* 3%	3,132,228.60	14,167,057.93	23,646,485.23	32,404,017.94	44,905,854.47	118,255,644
Ծրագրի համախառն շահույթ կամ վնաս	-44,628,035	105,072,346	175,378,099	240,329,800	333,051,754	**809,203,358**
Գործակալների միջնորդավճար 10%	17,401,270	78,705,877	131,369,362	180,022,322	249,476,969	656,975,801
Գործավարման ծախսեր 5%	8,700,635	39,352,939	65,684,681	90,011,161	124,738,485	328,487,901
Ծրագրի զուտ շահույթ/վնաս	-70,729,940	-12,986,470	-21,675,945	-29,703,683	-41,163,700	**176,259,737**

- Ծրագրի շրջանակներում ռիսկերի 90%-ը վերաապահովագրվելու է Swiss Re շվեյցարական վերաապահովագրական ընկերությունում [4],
- ԳԱԱԳ (Գյուղատնտեսական Ապահովագրության Ազգային Գործակալություն)՝ ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԲ կողմից ստեղծված կառույց, որը կոորդինացնում և կարգավորում է գյուղատնտեսական շուկան, մշակում պրոդուկտներ, սահմանում սակագներ, մեթոդաբանություններ և այլն: Ապահովագրական ընկերությունները հանդիսանում են ԳԱԱԳ անդամ և վճարում են անդամավճարներ, որոնց չափը ներկայացված է աղյուսակում [5]:
- Վնասի կարգավորման ծախսերի 3% չափը սահմանվել է՝ հիմնված գույքի ապահովագրության վնասների գնահատման փորձի վրա:

Աղյուսակ 2-ից երևում է, որ 5 տարիներից ոչ մեկի ընթացքում գյուղատնտեսական ապահովագրության ծրագիրը դրական ազդեցություն չի ունենալու ապահովագրական շուկայի վրա: Ծախսերի ամենամեծ կշիռը վերաապահովագրավճարներից հետո կազմում են գործակալական միջնորդավճարները և ԳԱԱԳ անդամավճարները, որոնք կազմում են ավելի շատ, քան կանխատեսվող հատուցումները:

Գյուղատնտեսական ապահովագրության այսպիսի համակցությունը գնահատվում է **ոչ արդյունավետ կամ ոչ նպատակահարմար**:

Ամփոփելով հոդվածը և կատարված վերլուծությունը՝ ստորև նշենք ծրագրի դրական և բացասական կողմերը.

Դրական կողմեր

1. Ի վերջո ՀՀ-ում ներդրվում է երկար սպասված գյուղատնտեսական ապահովագրությունը:

2. Գյուղացիները կստանան որոշ պաշտպանվածություն, որի շնորհիվ իրենց կատարած որոշ ծախսեր կհատուցվեն:

3. Ծրագրի շնորհիվ բավական շատ վիճակագրական տվյալներ կհավաքագրվեն՝ հետագայում ավելի լավ և արդյունավետ մոդել մշակելու համար:

4. Ապահովագրավճարները կավելանան 3.2%-ով:

5. Կավելանա ապահովագրական ոլորտի մասնագետների պահանջարկը՝ ի դեմս վնասի փորձագետների, գործակալների:

6. ՀՀ-ում կզարգանա ապահովագրական մշակույթը:

Բացասական կողմեր

1. Արտադրական ծախսերի վրա հիմնված մեխանիզմը ամբողջությամբ չի ծածկում բնական աղետների հետևանքով գյուղացու կրած փաստացի վնասները: Եթե, օրինակ, 1,000,000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող խաղող ստանալու համար գյուղացին ծախսում է 100,000 դրամ, ապա պատահարի ժամանակ ստանալու է 100,000 դրամ հատուցում, իսկ 900,000 դրամի կորցրած բերքի դիմաց ոչ մի հատուցում չի ստանալու: Հետևաբար, խոշոր պատահարները կարող են լուրջ սոցիալական խնդիրներ, դժգոհություններ, ընդհուպ մինչև քաղաքացիական հուզումներ առաջացնել:

2. Վերոնշյալ կետում նշված իրադարձությունների հետևանքով ազգաբնակչության մոտ կարող է պակասել վստահությունը ապահովագրական ընկերությունների նկատմամբ, որը անուղղակի ազդեցություն կունենա նաև ապահովագրական մյուս տեսակների՝ այդ թվում ԱՊՊԱ-ի վրա:

3. Հաշվարկված սակագները, կանխատեսվող վնասաբերությունը և այլ թվային ցուցիչներ հիմնված են միայն հարցազրույցների վրա, և իրական վիճակագրության բացակայության հետևանքով հնարավոր են մեծ շեղումներ:

4. Ապահովագրական ընկերությունները յուրաքանչյուր տարի կրում են վնաս:

Առաջարկություններ

1. Այս ծրագրի շրջանակներում վաճառվող ապահովագրական վկայագրերը՝ պոլիսները, վաճառել ոչ թե գործակալների, այլ ընկերությունների հաստիքային աշխատակիցների միջոցով՝ 2-3% միջնորդա-

վճարով, կամ հենց գործակալների միջոցով՝ 5% միջնորդավճարով: Արդյունքում միջնորդավճարների ծախսը կկրճատվի 328,487,900.5 ՀՀ դրամով, իսկ ապահովագրական շուկան վնասի փոխարեն կստանա շահույթ՝ 152,228,163.5 ՀՀ դրամի չափով:

2. Կրճատել նաև ԳԱԱԳ անդամավճարի չափը՝ 5-ի փոխարեն վճարելով 3%: ԱՊՊԱ ոլորտում Ավտոապահովագրողների Բյուրոյին վճարվող անդամավճարը կազմում է 1.5%, հետևաբար 5% անդամավճարը ԳԱԱԳ-ին հիմնավորված չէ: Այդյունքում ևս 131,395,362.3 ՀՀ դրամ կավելանա շահույթին, և այն կկազմի 283,623,489.8 ՀՀ դրամ, իսկ Պետական Բյուջե կվճարվի 56,724,697.96 ՀՀ դրամ կամ 116,477 ԱՄՆ դոլար շահութահարկ:

3. Ծրագրի շրջանակներում մեծ շեշտադրում դնել վիճակագրական տվյալների հավաքագրման, ճշգրտումների վրա, որպեսզի պիլոտի ավարտից հետո հնարավոր լինի մշակել և ներդնել ավելի համապարփակ, մատչելի և փոխադարձ արդյունավետ պրոդուկտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. KfW Բանկի հետազոտություն՝ Consulting Services for the Programme, Agricultural Insurance Implementation in Armenia, հունվար 2019թ:
2. Վիճակագրական տեղեկագիր - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019 թվականին: https://www.armstat.am/file/article/29_-gt_2018.pdf:
3. Финансовый рейтинг страховых компаний Армении на 31.12.2018, № 56, 06.02.2019.
4. *Michael J. McCord.* Hail cover for pilot in Armenia, October 29th 2018.
5. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն:

ЗАПЛАНИРОВАННАЯ МОДЕЛЬ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ АРМЕНИИ, ЕЕ ВЛИЯНИЕ НА СТРАХОВОЙ РЫНОК АРМЕНИИ

Л.А. Кочарян

АННОТАЦИЯ

Было запланировано внедрить сельскохозяйственное страхование в Армении. Много исследований было проведено до 2017 года, но реализация была невозможна из-за различных проблем. В 2017 году банк KfW предоставил кредит на сумму 5 339 000 евро для разработки и реализации соответствующей сельскохозяйственной программы в Армении. Была разработана «Пилотная программа сельскохозяйственного страхования с участием государства», которая в течение 2019–2024гг. должна быть реализована. В данной

статье рассматриваются характеристики вышеуказанной программы, ее проблемы, видения и влияние на страховой рынок Армении.
Ключевые слова: страхование, сельское хозяйство, риски, урожай, стихийное бедствие.

PLANNED AGRUCULTURAL INSURANCE MODEL OF ARMENIA, ITS IMPACT ON ARMENIAN INSURANCE MARKET

L. Kocharyan

ABSTRACT

It has long been intended to implement agricultural insurance in Armenia. Many regulations and research were done before 2017, but the implementation of the insurance was not possible because of a variety of problems. In 2017 the KfW Bank gave a loan of 5,339,000 EUR to design and implement an appropriate agricultural program in Armenia. A program called “Pilot Program of Agricultural Insurance with State Involvement” was designed, a pilot program which is intended to be implemented from 2019–2024. The article reviews the characteristics of the abovementioned program, its issues, problems, vision and impact on the insurance market of Armenia.
Keywords: insurance, agriculture, risks, crop, disaster.

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գ. Ա. Դանիելյան

УДК 336 Поступила: 11.06.2019г.
Сдана на рецензию: 11.06.2019г.
Подписана к печати: 20.06.2019г.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
danieliangevorg@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման արդի միտումները: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվում հյուրընկալության ոլորտին՝ ցույց տալով հյուրանոցային տնտեսության օբյեկտների թվաքանակի շարժը վերջին տարիներին և դրանց աշխարհագրական տեղաբաշխումը: Ներկայացվում են նաև հյուրանոցային ծառայություններից ստացվող ապրանքաշրջանառության ծավալները: Հյուրանոցային տնտեսության զարգացման միտումների վերլուծության արդյունքում գնահատվում է ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից զբոսաշրջության ոլորտում սահմանված նպատակների իրատեսական լինելը, դրանց հասնելու հնարավորությունը:

Հիմնաբառեր՝ զբոսաշրջություն, հյուրընկալության ոլորտ, հյուրանոցային տնտեսություն, հյուրանոցային օբյեկտ, տնտեսության գերակա ճյուղ:


Զբոսաշրջության ոլորտը կարևոր դերակատարում ունի բազմաթիվ երկրների տնտեսություններում: Հայաստանը ևս բացառություն չէ, քանի որ այստեղ այցելողների թվաքանակը տարեցտարի աճում է՝ դրական ազդեցություն գործելով տնտեսական աշխուժացման, ներդրումների ու զբաղվածության ցուցանիշների վրա: Եթե խոսենք թվերով, 2017 թվականին Հայաստանի Հանրապետության Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 13.7%-ը ձևավորվել է զբոսաշրջության ոլորտի շնորհիվ [1]: Համեմատության համար նշենք, որ նույն ցուցանիշը միջինացված համաշխարհային և եվրոպական տնտեսությունների համար կազմում է համապատասխանաբար 3.1% և 9.6%:

Իզուր չէ, որ 2004 թվականին Հայաստանում զբոսաշրջությունը ճանաչվել է որպես տնտեսության գերակա ճյուղ, և սահմանվել են դրա զարգացման գերակա ուղղությունները: Համաձայն Զբոսաշրջության և

գրոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքի՝ զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է զբոսաշրջային գործունեությանն աջակցումը և դրա առաջնային ուղղությունների զարգացման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կառուցվածքային պայմանների ստեղծումը: Բացի այդ, սկզբունքային է Հայաստանի Հանրապետության` որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումը: Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականությունն այսքանով իհարկե չի ավարտվում, այլ ամբողջությամբ կարգավորվում է վերոնշյալ օրենքի գլուխ 2-ով:

Ուսումնասիրենք նաև այս ոլորտի համար էական նշանակություն ունեցող և դրա վիճակը նկարագրող տարբեր ցուցանիշների միտումները: Սկսենք Հայաստան այցելողների թվաքանակից, որը վերջին 14 տարիների ընթացքում ավելի քան հնգապատկվել է: 2005 թվականից սկսած այս ցուցանիշը միշտ ունեցել է աճի միտում (բացառություն է կազմում 2015 թվականը, երբ Հայաստան այցելեց ընդամենը տասներկու հազարով ավելի քիչ մարդ, քան դրա նախորդ տարին) և ապահովել է տարեկան միջինում 13.5% աճ, մինչդեռ միջին համաշխարհային աճը կազմում է 3.3%: Այս ցուցանիշի միտումներն ավելի պատկերավոր դարձնելու համար ներկայացնենք դրանք ստորև բերվող գծապատկերով՝

Գծապատկեր 1*. Հայաստան այցելածների թվաքանակը (հազար մարդ) 2005–2018 թվականներին [2]:*



Հարկ է նշել նաև այն համախառն հասույթի մեծությունը, որը ստացվել է ներգնա զբոսաշրջիկներից: Համաձայն ՀՀ Զբոսաշրջության պետական կոմիտեի զեկույցների՝ այդ թիվը 2016 թվականին գերազանցել է 1 միլիարդ ԱՄՆ դոլարը:

Զբոսաշրջության զարգացման մասին վկայող մեկ այլ կարևոր ցուցանիշ էլ ոլորտի կողմից ապահովող զբաղվածության մակարդակն է, որն այժմ գերազանցում է քսան հազար զբաղված մարդը:

Այսպիսով՝ օրինաչափ է նաև զբոսաշրջությանը զուգընթաց դրա հիմնական հենասյուն համարվող ուղղության՝ հյուրընկալության ոլորտի զարգացումը: Դարերով կատարելագործվելով և նոր գործառույթներ ձեռք բերելով՝ հյուրընկալություն հասկացությունը հասել է մեր օրեր՝ որպես ուժեղ և տնտեսության մեջ մեծ դեր ունեցող ոլորտ [3]: Հյուրընկալությունն իր մեջ է ներառում գործունեության տարբեր բնագավառներ և ծառայությունների տարբեր տեսակներ, ինչպիսիք են [4]՝

- կեցության կազմակերպում,
- հանրային սննդի կազմակերպում,
- միջոցառումների կազմակերպում,
- զվարճանքի կենտրոններ,
- տրանսպորտ,
- էքսկուրսիոն գործունեություն,
- ցուցահանդեսների և կոնֆերանսների կազմակերպում և այլն:

Կեցության կազմակերպումն իրականացվում է հյուրանոցային ծառայություններ մատուցելու միջոցով: Հյուրանոցային ծառայություններն են տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման, ինչպես նաև կեցության հետ կապված այլ վճարովի ծառայությունները [5]: Անկողնու ամենօրյա հարդարումը, հաճախորդներին տրամադրված կացարանի և սանհանգույցի ամենօրյա մաքրումը համարվում են հյուրանոցային նվազագույն ծառայություններ:

Հյուրանոցային ծառայությունները մատուցվում են հյուրանոցային օբյեկտներում, որոնք ըստ օրենքի կարող են լինել՝

- հյուրանոցներ,
- մոթելներ,
- հյուրանոցատիպ համալիրներ,
- առողջարաններ,
- հանգստյան և մասնագիտացված ճամբարներ կամ տներ,
- պանսիոններ,


• զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիներ (համալիրներ),

• զբոսաշրջային տներ:

Հյուրանոցային տնտեսությունը համարվում է տնտեսության նորմալ կենսագործունեությունն ապահովող ամենակարևոր ոլորտներից մեկի՝ զբոսաշրջության առաջնային ենթակառուցվածքներից մեկը: Ընդհանուր առմամբ զբոսաշրջության զարգացման վրա ներազդելու տեսանկյունից առավել կարևորվում են զբոսաշրջային հետևյալ հինգ ենթակառուցվածքային ծառայությունները՝ հյուրանոցային տնտեսությունները, տրանսպորտը, հանրային սննդի օբյեկտները, զվարճությունների արդյունաբերությունը և ծառայությունների փաթեթը ամրագրման համակարգչային ցանցերը:

Հյուրանոցային օբյեկտների թվի աճը Հայաստանում վկայում է նաև հյուրանոցային տնտեսության զարգացման մասին:

Գծապատկեր 2. *Հյուրանոցային օբյեկտների թիվը ՀՀ-ում 2011-2017 թվականներին [6]*



Գծապատկերից 2-ից երևում է, որ 2011-2017թթ. ընկած ժամանակահատվածում հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը աճել է գրեթե 2 անգամ: Սա նշանակում է նաև, որ ավելացել է աշխատատեղերի

քանակը, և հյուրանոցային տնտեսության աշխատաշուկան ևս ակտիվություն է գրանցում մեր հանրապետությունում:

Անդրադառնալով հյուրանոցային ծառայությունների մատուցման ժամանակագրությանը՝ կարող ենք ասել, որ այն կախված է մարդու, հասարակության զարգացվածության մակարդակից: Այսօր ժամանակակից մարդուն գոհացնելու համար ոչ միայն անհրաժեշտ են իդեալական հարմարություններ, այլև որակյալ սպասարկում, լավ պատրաստված անձնակազմ: Համապատասխանաբար՝ ժամանակի ընթացքում հյուրանոցներում փոխվել է ոչ միայն սպասարկման որակը, այլ նաև մեծ ուշադրություն է դարձվել հյուրանոցի շենքի արտաքին և ներքին դիզայնին: Հասնելով համապատասխան բարձունքի և՛ տնտեսությունում, և՛ հասարակական կյանքում, զբաղեցնելով կարևոր տեղ՝ հյուրանոցային տնտեսությունը զարգացման նոր տեմպեր է արձանագրում: Ամեն օր բացվում են նոր հյուրանոցներ, վերանորոգվում են հները, բարեկարգվում է համարային ֆոնդը, բարելավվում է սպասարկման մշակույթը: Այս բոլոր գործոններն ի հայտ են բերում նոր չափանիշներ հյուրանոցային ոլորտում աշխատող անձնակազմի որակավորման նկատմամբ: Այլ կերպ ասած՝ զբոսաշրջության և հատկապես հյուրանոցային տնտեսության զարգացումը խթանում է նաև աշխատաշուկայի զարգացումը հյուրընկալության ոլորտում: Վերջինս աշխատակիցների համալիր գործունեություն է, որը բավարարում է զբոսաշրջիկների ցանկությունները: Զբոսաշրջային ձեռնարկությունների առևտրային ուղղվածությունը խթանում է սպասարկման ոլորտի զարգացումը, ինչպես նաև մասնագիտացված ոլորտների ստեղծումը: Այս ամենը հնարավորություն է տալիս առանձնացնել հյուրանոցային սպասարկումը հյուրընկալության ոլորտում:

Հյուրանոցային սպասարկումն իր մեջ ներառում է զբոսաշրջիկների սպասարկման ամբողջական համալիր, հանդիսանում է որոշիչ գործոն, որը խթանում կամ խանգարում է երկրում զբոսաշրջության զարգացումը: Ժամանակակից հյուրանոցային համալիրն իրենից ներկայացնում է բարդ ձեռնարկություն, որտեղ տասնյակ մասնագիտություններով հարյուրավոր մարդիկ սպասարկում են զբոսաշրջիկներին: Հյուրանոցային ձեռնարկության գլխավոր գործառույթը ժամանակավոր կացարանի տրամադրումն է: Հյուրանոցային ձեռնարկությունները միմյանցից տարբերվում են սենյակների քանակով, դասակարգմամբ, տեղակայմամբ, մատուցվող ծառայությունների տեսակներով և այլն:


Նշենք, որ հյուրանոցային օբյեկտների դասակարգումը Հայաստանում կատարվում է ՀՀ Կառավարության կողմից տրվող որակավորման կարգերին համապատասխան: Հյուրանոցային տնտեսության օբյեկտները

որակավորման կարգ կարող են ստանալ կամավորության սկզբունքով: Ըստ ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության տվյալների՝ Հայաստանում գործում են որակավորման կարգ ստացած 22 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնցից 11-ը գտնվում են Երևանում, 9-ը՝ Տավուշի մարզում, 2-ը՝ Կոտայքի մարզում [7]:

Բացի դրանից, Հայաստանում գործում մի շարք միջազգային հյուրանոցային ցանցերի ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, այդ թվում՝ Marriot Armenia Hotel Yerevan, Radisson BLU Hotel Yerevan, ibis Yerevan Center, DoubleTree by Hilton Yerevan City Center, The Alexander Yerevan, Best Western Plus Congress Hotel Yerevan, Holiday Inn Express Yerevan և այլն: Սա նշանակում է, որ բարձրակարգ հյուրանոցների նկատմամբ հետաքրքրությունը ևս աճել է մեր հանրապետությունում:

Հյուրանոցային օբյեկտներին զուգահեռ բնականաբար աճում են նաև դրանց կողմից ստացվող հասույթի ծավալները: Այս ցուցանիշի վերջին տարիների միտումները ներկայացնենք ստորև բերվող գծապատկերով՝

Գծապատկեր 3. *Հյուրանոցների շրջանառությունը կեցության կազմակերպումից ստացված եկամուտներից (1,000 ՀՀ դրամ) [8]*




Ինչպես երևում է գծապատկերից, հետճգնաժամային տարիներին ՀՀ-ում կեցության կազմակերպումից ստացվող եկամուտները հյուրանոց-

ներում գրանցում են միայն աճի միտում: Մասնավորապես՝ 2018 թվականին այդ շրջանառությունը կազմել է շուրջ 34.5 միլիարդ դրամ, ինչը գրեթե 3 անգամ ավելի է, քան դրանից 7 տարի առաջ: Կարելի է նկատել նաև, որ վերջին 2 տարիներին աճի տեմպն էլ ավելի է մեծացել՝ գերազանցելով տարեկան 20%-ը:

Հարկ է նշել նաև, որ հյուրանոցային տնտեսության զարգացումը պայմանավորված է ոչ միայն ներգնա, այլև ներքին զբոսաշրջության աշխուժացմամբ: Այսինքն՝ բացի Հայաստան այցելած զբոսաշրջիկներից, պետք չէ մոռանալ նաև մշտապես ՀՀ-ում բնակվող քաղաքացիներին, ովքեր հանգստի կամ այլ նպատակներով իրականացնում են ճամփորդություններ Հայաստանի տարածքում՝ այդպիսով օգտվելով հյուրընկալության ոլորտի կողմից առաջարկվող ծառայություններից:

Այս առումով շատ կարևոր է հասկանալ նաև հյուրանոցային օբյեկտների աշխարհագրական տեղակայումը Հայաստանում: Այսպես, ըստ ՀՀ Ազգային Վիճակագրության Ծառայության (ԱՎԾ)՝ 2017 թվականին գործող 556 հյուրանոցային օբյեկտներից 320-ը (կամ շուրջ 58%-ը) տեղակայված են մայրաքաղաքում, իսկ 236-ը (կամ շուրջ 42%-ը)՝ ՀՀ մարզերում:

Գծապատկեր 4. *Հյուրանոցային օբյեկտները ՀՀ-ում 2017 թվականին՝ ըստ գտնվելու վայրի [9]*



Տրամաբանական է նաև այն փաստը, որ հյուրանոցային օբյեկտների թվին համահունչ Երևանն առջևում է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկների թվաքանակով և նրանցից ստացված համախառն հասույթի ծավալներով:

Վերոնշյալ բոլոր տվյալներն ամփոփելով ու համադրելով՝ կարող ենք հստակ ասել, որ ՀՀ-ում զբոսաշրջության զարգացումը խթանում է հյուրընկալության ոլորտի կտրուկ ակտիվացումը ու հյուրանոցային տնտեսության ընդլայնումը: Զբոսաշրջության նման բուռն զարգացումն է, որ թույլ է տվել ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանն ու դրան առընթեր ՀՀ Պետական զզբոսաշրջային կոմիտեին սահմանել այնպիսի հավակնոտ նպատակներ, ինչպիսիք են 2020 թվականին հյուրընկալության ոլորտում ունենալ [10]՝

- 2.5 միլիոն ներգնա զբոսաշրջիկ,
- 2.5 միլիարդ ԱՄՆ դոլարի ապրանքաշրջանառություն,
- 50 նոր հյուրանոց,
- 15,000 հավելյալ ննջատեղ:

Այսպիսով, հոդվածում իրականացված ընդհանուր ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ Հայաստանում հյուրընկալության ոլորտը՝ հատկապես հյուրանոցային տնտեսությունը, դրսևորում է աճի միտումներ՝ զբոսաշրջության զարգացմանը զուգընթաց: Աճում են և՛ հյուրանոցային օբյեկտների թիվը, և՛ մատուցվող ծառայությունների տեսակներն ու որակը, և՛, ամենակարևորը, այս ոլորտում ստացվող ապրանքաշրջանառության ծավալները: Այս զարգացման հիմքում մեծապես ընկած է զբոսաշրջության ակտիվությունը՝ թե՛ ներգնա և թե՛ ներքին զբոսաշրջիկների աճող հոսքերով: Ոլորտում աճի այսպիսի միտումները հուսադրում են, որ վերոնշյալ նպատակները որքան հավակնոտ են, այնքան էլ իրատեսական, ու այդչափ զարգացած զբոսաշրջություն ունենալը, հնարավոր է, արդեն մոտ է Հայաստանին: Միայն մնում է հիշել, որ արդեն իսկ առկա միտումները ձեռք են բերվել մեծածավալ ջանքերի ու աշխատանքների, այլ ոչ թե անգործության արդյունքում, և այդ միտումներն առնվազն պահպանելու համար պետք է շարունակել զարկ տալ զբոսաշրջության զարգացման ծրագրերին ու դրա ռազմավարական ուղղություններին և ոչ մի դեպքում տնտեսության այս ճյուղը չմատնել ինքնահոսի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Պետական զբոսաշրջային կոմիտե, Զբոսաշրջային ոլորտը ՀՀ-ում, զեկույց, Մեխակ Ապրեսյան, 12/2017:

2. ՀՀ ԱՎԾ, armstat.am, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2005–2018:
3. Հակոբյան Ք., Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում, Եր., 2012, էջ. 5–8:
4. Организация обслуживания в гостиницах и туристических комплексов: Учебное пособие- М: Альфа-М; ИНФРА-М,2006. 304с.
5. ՀՀ Օրենքը Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին:
6. ՀՀ ԱՎԾ, armstat.am, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2011–2017:
7. Աղբյուրը՝ https://b24.am/economy/60180.html:
8. ՀՀ ԱՎԾ, armstat.am, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2011–2018:
9. Աղբյուրը՝ https://www.armstat.am/file/article/marzer_2018_22.pdf:
10. ՀՀ ՏԶ և ՆՆ, ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման տեսլական, ռազմավարություն, գործողությունների ծրագիր 2017:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ГОСТИНИЧНОЙ ОТРАСЛИ В АРМЕНИИ

Г.А. Даниелян

АННОТАЦИЯ

В статье представлены актуальные тенденции развития туризма в Армении. Следует отметить, что в статье придается особое значение индустрии гостеприимства, приводя при этом список геолокации мест проживания и изменение их количества за последние годы. В статье также приводится валовой доход, полученный от услуг размещения в Армении. Проанализировав тенденции развития гостиничного бизнеса, автор оценивает актуальность и достижимость целей индустрии туризма, установленных Министерством экономического развития и инвестиций Республики Армения.

Ключевые слова: туризм, индустрия гостеприимства, гостиничный бизнес, место проживания, приоритетная отрасль экономики.

DEVELOPMENT TENDENCIES OF HOTEL INDUSTRY IN ARMENIA

G. Danielyan

ABSTRACT

The actual development tendencies of the tourism in Armenia are represented in the article. Notably, a special importance is given to the hospitality industry by demonstrating the geolocation of lodging places and the change of their number for last years. The article also gives data on the gross income generated from accommodation services in Armenia. After having analyzed the development tendencies of hotel industry, the author estimates the relevance and attainability of the tourism industry targets set by the Ministry of economic development and investments of the Republic of Armenia.

Keywords: tourism, hospitality industry, hotel industry, lodging place, priority branch of economy.

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՂՄԻ ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ. ԴԻՆԱՄԻԿ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊՐՈՑԻԿԼԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

УДК 336.7 Поступила: 23.04.2019г.
Сдана на рецензию: 23.04.2019г.
Подписана к печати: 13.05.2019г.

Ռ.Լ. Գասպարյան

Հայ-Ռուսական Համալսարան
rubengasparyan94@gmail.com

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պրոցիկլայնության նվազեցումը համարվում է ֆինանսական համակարգի ճարտարապետության բարեփոխման օրակարգի հիմնական մարտահրավերներից: Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների դինամիկ պահուստավորումը մակրոպրուդենցիալ կարգավորման ակտիվների և կապիտալի կողմի արդյունավետ գործիք է, որը հնարավորություն է ընձեռում նվազեցնել ՀՀ բանկային համակարգում առկա պրոցիկլայնության ռիսկը:

Հիմնաբառեր՝ բանկ, պահուստ, դեֆոլտ, ռիսկ, ֆինանսական կայունություն:

Ներածություն

Պրոցիկլայնության նվազեցումը համարվում է ֆինանսական համակարգի ճարտարապետության բարեփոխման օրակարգի հիմնական մարտահրավերներից մեկը:Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների դինամիկ պահուստավորումը մակրոպրուդենցիալ կարգավորման ակտիվների և կապիտալի կողմի կարևորագույն գործիքներից է: Այն ընձեռում է հնարավորություն նվազեցնել ֆինանսական համակարգում առկա պրոցիկլայնության ռիսկը կամ նույնիսկ հնարավորություն տալ հակացիկլիկ բնույթի կարգավորում իրականացնել[1]: Իսպանիայում 2000-ականներին կիրառված դինամիկ պահուստավորման քաղաքականությունը եկամուտները համահարթեցնելու, կորուստների մասին ազդանշան ստանալու և բումի ու վարընթաց ցիկլերի ընթացքում ռիսկերը վերաբաշխելու առաջին փորձերից է [2]:

Ներկայում Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ 9) [3] ներդրմամբ հնարավոր կորուստների պա-

հուստի հաշվարկի պահանջը փոփոխում է գլոբալ պրուդենցիալ կարգավորման ենթակառուցվածքը, չնայած կան նախազգուշացումներ այս պահանջների պրոցիկլայնության մասին: Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների գնահատումը հիմնված է կանխատեսվող ինֆորմացիայի վրա, որը հնարավորություն է տալիս ֆինանսական ինստիտուտներին կանխատեսել ապագա մակրոտնտեսական զարգացումները և պատրաստվել հնարավոր կորուստների:

Հնարավոր կորուստների համար կանխատեսումներ կառուցելու ոչ ստանդարտացված և մեղմ մոտեցումը, բանկերին ընձեռնված ստանդարտի կիրառումը աղավաղելու (մանիպուլացնելու) հնարավորությունը և տերմինների տարբերակված մեկնաբանումը նոր համակարգի թերություններից են [4]: Դրական արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է ստանդարտի մոտեցումների և շրջանակների հստակեցում ՀՀ բանկային համակարգում: Այս հետազոտության նպատակն է գնահատել դինամիկ պահուստավորմանններդրման հնարավորությունները և հնարավոր արդյունքները ՀՀ-ում:

1. ՀՀ բանկային համակարգում ակնկալվող կորուստների պահուստի կիրառությունը

2018թ.-ի հունվարից սկսած Հայաստանի բանկերը ներդրել են ՖՀՄՍ 9 ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստավորմաննոր ստանդարտը: Համաձայն նոր ստանդարտի՝ նույնիսկ ամենաքիչ ռիսկային ակտիվներն ունեն դեֆոլտի հավանականություն և կորուստները կարող են լինել յուրաքանչյուր պարագայում: Նոր ստանդարտով առաջարկված բացահայտումները և վարկերի՝ ըստ արժեզրկման կարգավիճակի ավելի հստակեցված դասակարգումը անշուշտ կբարելավեն ֆինանսական հաշվետվությունների որակը: Այս մոտեցումը կապահովի վարկային ռիսկերի, կորուստների և մնացորդների առավել հստակեցված ներկայացում:

Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 39-ի կրած կորուստների հաշվարկից ՖՀՄՍ 9-ի դինամիկ կանխատեսվող կորուստների հաշվարկին անցումը ակնկալվում է, որ կունենա բազմակողմանի ազդեցությունինչպես առանձին ֆինանսական ինստիտուտների, այնպես էլ ամբողջ ֆինանսական համակարգի կայունության վրա:

Հակացիկլիկ մակրոպրուդենցիալ կարգավորման տեսանկյունից բավականին ընդհանուր գաղափարական հենքը օգտակար արդյունքներ է կանխատեսում: Այս ստանդարտի կիրառությունըհաշվարկի պահանջների հստակեցման և համընդհանուր մոտեցման կիրառման պարագայում կնվազեցնի ֆինանսական համակարգում առկա ռիսկերը:

ՖՀՄՍ 9-ը դասակարգում է ֆինանսական ակտիվները ըստ վարկային ռիսկի փուլերի (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. *Ֆինանսական ակտիվների դասակարգումըըստ վարկային ռիսկի փուլերի:*

Փուլ 1	Ընդգրկում է այն ֆինանսական գործիքները, որոնց վարկային որակը չի վատացել սկզբնական ճանաչման պահից կամ որոնք ունեն ցածր վարկային ռիսկ:
Փուլ 2	Ընդգրկում է այն ֆինանսական գործիքները, որոնց վարկային որակը էականորեն կամ զգալիորեն վատացել է սկզբնական ճանաչման պահից, սակայն բացակայում է վարկի արժեզրկման օբյեկտիվ վկայություն:
Փուլ 3	Ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ունեն արժեզրկման օբյեկտիվ վկայություններ:

Աղբյուր՝ *հեղինակի մեկնաբանությունները՝ հիմնված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ 9) վրա [5]:*

Ինչպես Բազելյան կոմիտեի կողմից առաջարկված Ներքին վարկանիշների վրա (IRB) հիմնված հաշվարկները [6, 7], այնպես էլ ակնկալվող վարկային կորուստների (ECL) գնահատված ցուցանիշները բաղկացած են հետևյալ հիմնական պարամետրերից [8, 9].

Դեֆոլտի հավանականություն (PD)՝ արտահայտում է կոնկրետ վարկանիշ կամ որոշ քանակությամբ ժամկետանց օրեր կուտակած վարկառուների միջին տոկոսը, ովքեր դառնում են անվճարունակ/հայտնվում են դեֆոլտում մեկ տարվա կամ ամբողջ վարկային պատմության ընթացքում:

Դեֆոլտի ժամանակ ակտիվի մնացորդ (EAD)՝ արտահայտում է ակտիվի՝ դեֆոլտում հայտնվելու պահինհաշվեկշռային մնացորդի չափը: Այս ցուցանիշը չափազանց կարևոր է վարկային գծերի դեֆոլտի պահին մնացորդը գնահատելու համար:

Դեֆոլտի դեպքում կորուստ (LGD)՝ արտահայտում է ակտիվի մնացորդի այն մասնաբաժինը, որը չի ակնկալվում, որ կվերադարձվի դեֆոլտի պարագայում:

Սպասվող վարկային կորուստների (ECL) գործակիցը գնահատվում է հետևյալ ընդհանրացված բանաձևով՝

$$ECL_{g,s} = EAD\ Coef_{g,s} * PD_{g,s} * LGD_{g,s} \qquad (4.18)$$

որտեղ

g – ֆինանսական ակտիվի խումբ/տեսակ; s – դասակարգման փուլ[1];

$ECL_{g,s}$ – վարկերի հնարավոր կորուստների դրույքը s փուլի և g վարկային խմբի վարկերի համար;

$EAD\ Coef_{g,s}$ – դեֆոլտի ժամանակ ակտիվի մնացորդի դրույքը s փուլի և g վարկային խմբի վարկերի համար:

$PD_{g,s}$ – դեֆոլտի հավանականությունն է s փուլի և g վարկային խմբի վարկերի համար:

$LGD_{g,s}$ – դեֆոլտի դեպքում կորուստն է s փուլի և g վարկային խմբի վարկերի համար:

Այս ընդհանրացված բանաձևը առաջարկում է դինամիկ պահուստավորման ընդհանուր գաղափարական հենքը: Ստանդարտի չհստակեցված պահանջները հնարավորություն են տալիս բանկերին օգտագործել առավել ռիսկային մեթոդաբանություն պահուստավորման համար: Այստեղ հաշվառման և հաշվարկների ներկայացման և ընդհանուր մակրոպրուդենցիալ կարգավորման մեխանիզմները հայտնվում են հակազդեցության մեջ: Ոլորտի կարգավորողների կողմից կա անհրաժեշտություն օգտվել նոր մոտեցումների առավելություններից, բայց կիրառել պահուստավորման դինամիկ մոտեցումը միայն պահանջները և շրջանակները հստակեցնելուց հետո:

ՀՀ բանկային համակարգի համար առաջարկվում է դինամիկ պահուստավորման մոդել, որը կհամապատասխանի ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միաժամանակ կունենա պարզ կիրառություն, ինչի շնորհիվ բոլոր բանկերը կկարողանան առանց ավելորդ գործառնական ծախսերի հաշվել իրենց հնարավոր կորուստների պահուստները: Կարգավորող մարմինների համար կհեշտանա ֆինանսական ինստիտուտների արդյունավետ վերահսկողության իրականացումը և համակարգի կարգավորումը:

2. ՀՀ ԿԲ-ի կողմից ամբողջ համակարգի համար ակնկալվող կորուստների պահուստի հաշվառումը

ՀՀ բանկերի վարկային պորտֆելները հիմնականում խմբավորված են հետևյալ տեսակներով՝ բիզնես, հիփոթեքային, գյուղատնտեսական, սպառողական և կրթության վարկեր: Վարկային ռիսկը տարբերվում է՝

[1] Ըստ ՖՀՄՍ 9-ի՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ փուլերի, որը հիմնված է վարկային ռիսկի չափի վրա:


ելնելով խմբից: Օրինակ, սպառողական վարկերը նշվածներից ամենացածր դեֆոլտի հավանականությունը ունեն, բայց ունեն համեմատաբար բարձր կորուստների մակարդակ դեֆոլտի պարագայում: Ի հավելում՝ յուրաքանչյուր խմբի մեջ գոյություն ունի վարկային ռիսկի տարբերակում: Հայաստանում գործում է երկու վարկային ռեգիստր, որոնք հավաքագրում են վարկային պատմություն և կորուստի վիճակագրություն՝ ՀՀ ԿԲ-ի վարկային ռեգիստրը և ԱՔՌԱ վարկային ռեգիստրը: Երկու ինստիտուտներն էլ հավաքագրում են անհատական վարկերի և վարկառուների ժամկետանց օրերի վերաբերյալ պատմական տվյալներ: Ի շնորհիվ իրենց ինստիտուցիոնալ կառուցվածքի՝ վարկային ռեգիստրը ունի միջոցներ և տեխնիկական հնարավորություն հաշվելու պատմական դեֆոլտի մեջ հայտված վարկերի բաժինը և, իհարկե, պատմական վերադարձումները դեֆոլտի պահից հետո: Բայց ո՛չ ԱՔՌԱ վարկային ռեգիստրը, ո՛չ ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրը չունի օրենսդրական թույլտվություն հրապարակելու այս տվյալները, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից: Վարկային ռեգիստրների կողմից համախմբված ամբողջ համակարգի միջին քանակային տվյալների հրապարակումը չի կարող հանդիսանալ բանկային գաղտնիքի կամ անհատական տվյալների հրապարակում: Այնուամենայնիվ այս տվյալները հասանելի չեն ո՛չ քաղաքականություն վարողների, ո՛չ շուկայի խաղացողների, ո՛չ էլ առավել ևս այս ոլորտում գործող հետազոտողների համար: Այս տեղեկատվության ստորև նշված հրապարակումը և օգտագործումը հնարավորություն կտա օբյեկտիվորեն և ամբողջությամբ գնահատել հնարավոր կորուստների պատմական մակարդակը, գնահատել մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը կորուստների վրա և ճշգրտորեն հաշվարկել հնարավոր կորուստների մակարդակը ՀՀ բանկերում:


Տվյալների բացակայության պարագայում որպես դեֆոլտի հավանականության մոտարկված տվյալ օգտագործվել է չաշխատող վարկերի պատմական վիճակագրությունը: Ստորև ներկայացված է հնարավոր կորուստների հաշվարկի պարզ՝ շուկայում հեշտությամբ կիրառելի և առավել օբյեկտիվ գնահատականների վրա հիմնված մոդելը՝ իր դինամիկ պարամետրերով:

Չնայած պատմական տվյալներ այս մոդելների միջոցով հնարավոր չի եղել հավաքագրել, մոտարկվել են վերլուծության համար հասանելի այնպիսի տվյալներ, որոնք թույլ են տալիս գնահատել այս մոդելի ընդհանուր կիրառությունը բանկային համակարգում և համապատասխանաբար ֆինանսական համակարգի վրա ազդեցությունը:

Վարկային գծերի վարկային փոխարկման գործակից (CCF – Credit Conversion Factor)

Ակնկալվում է, որ վարկերը ապագայում դեֆոլտում են հայտնվելու ավելի փոքր գումարով, քան գնահատման պահին նրանց հաշվեկշռային արժեքն է: Այսպիսի սպասումը հիմնավորված է, քանի որ վարկերի գումարից և կուտակված տոկոսներից վճարումներ կատարվում են մինչև դեֆոլտում հայտնվելը: Բայց պատկերը լրիվ այլ է վարկային գծերի պարագայում, որոնք կարող են հայտնվել դեֆոլտում ավելի մեծ հաշվեկշռային արժեքով, քան հնարավոր կորուստների հաշվարկի պահին հաշվեկշիռն է: Այդ իսկ պատճառով հնարավոր կորուստների պահուստը պետք է հաշվել այն հաշվեկշռի վրա, որով հնարավոր է, որ վարկառուն դեֆոլտում կհայտնվի: Գծապատկեր 1-ում ներկայացված է վարկային գծի օգտագործման դինամիկայի օրինակը: Ներկայացված էվարկային սահմանից օգտագործման դինամիկան մինչև դեֆոլտում հայտնվելը: Տվյալները հիմնված են անհատական վարկային գծերի պատմական վիճակագրության վրա, որի ստուգումըտվյալների հասանելիության պարագայում դժվարություն չի ներկայացնում: Քանի որ այսպիսի եզրակացություն է արվել որոշ այլ վերլուծություններում և տվյալների գաղտնիությունը չխախտելու համար, այսպիսի դինամիկայի առկայությունը ներկայացվում է որպես մշակված մոդելի հիմքում ընկած ենթադրություն:


Գծապատկեր 1. *Վարկային գծի օգտագործման դինամիկայի օրինակ:*



Աղբյուր՝ *հեղինակի հաշվարկներ*

Վարկային փոխարկման գործակիցը (CCF – credit conversion factor) թույլ կտա հաշվարկել վարկային գծի այն մասնաբաժինը, որքանով հնարավոր է հայտնվել դեֆոլտում: Նախկինում դեֆոլտում հայտնված

առանձին վարկային գծի համար փոխարկման գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$CCF_i = \frac{EAD_i}{CL_i} \quad (1)$$

որտեղ

CCF_i – i-րդ վարկային գծի փոխարկման գործակիցն է,

EAD_i – i-րդ վարկային գծի այն հաշվեկշռային արժեքն է, որով վարկային գիծը հայտնվել է դեֆոլտում,

CL_i – i-րդ վարկային գծի առավելագույն սահմանն է:

Վարկերի միջին օգտագործման մակարդակը հաշվարկելու համար միջինացվում են փոխարկման գործակիցները ըստ վարկային գծերի տեսակների:

$$CCF_g = \sum_{i=1}^{n} \frac{CCF_i * CL_i}{\sum_{i=1}^{n} CL_i} \quad (2)$$

որտեղ g-ն վարկային գծի խումբն է, n-ն՝ g խմբի մեջ ներառված և արդեն իսկ դեֆոլտում հայտնված վարկերի ընդհանուր քանակը:

Արդեն իսկ ժամկետանց օրեր կուտակած վարկային պարտավորությունները ունեն առավել մեծ օգտագործման մակարդակ: Այն վարկային գծերի համար, որոնք արդեն իսկ ավելի մեծ չափով են օգտագործել վարկային գիծը, քան տվյալ խմբի համար փոխարկման միջին չափն է, գործակիցը հավասար է փաստացի օգտագործման գործակցին՝

$$UR_i = \frac{AC_i}{CL_i} \quad (3)$$

որտեղ

UR_i – i-րդ վարկային գծի փաստացի օգտագործման գործակիցն է, իսկ

AC_i – i-րդ վարկային գծի փաստացի հաշվեկշռային արժեքն է:

Բոլոր այն վարկային գծերի համար, որոնց փաստացի օգտագործման գործակիցը ավելի փոքր է, քան այդ վարկային գծի խմբի միջին փոխարկման գործակիցը, հաշվարկվում է հավելյալ հնարավոր կորուստների պահուստ հետևյալ բանաձևով՝

$$\boldsymbol{ECL}_{\text{Հետհաշվեկշիռ},\boldsymbol{s},\boldsymbol{i}} = (CCF_g - UR_i) * \boldsymbol{PD_{g,s}} * \boldsymbol{LGD_{g,s}} \quad (4)$$

Այսպիսի հաշվարկի մոտեցումը կիրառելի է նաև բանկերի կողմից տրված երաշխավորությունների, ակրեդիտիվների և այլ հնարավոր հաշվեկշռային ակտիվների վերածվող հետհաշվեկշռային ակտիվների համար հնարավոր կորուստների պահուստի հաշվարկի համար:

Չնայած վարկային գծերի չօգտագործված մասը չի հաշվառվում, հաշվեկշռում և բանկը փաստացի չունի այդպիսի ակտիվ, կորուստներ այս հետհաշվեկշռային մնացորդների գծով կարող է կրել: Բայց հաշվապահական հաշվառման տեսանկյունից հնարավոր կորուստների այս պահուստը չի կարող հաշվառվել ակտիվների մեջ և ճշգրտել գոյություն չունեցող ակտիվների արժեքը: Այնուամենայնիվ, այս պահուստի արժեքի փոփոխությունը ամբողջությամբ արտացոլվում է կապիտալի հաշվառման մեջ և նվազեցնում կապիտալի արժեքը պահուստի աճի դեպքում: Հետևաբար՝ այս գործիքը համարվում է կապիտալի կողմից մակրոպրուդենցիալ գործիք և ճշգրտում բանկի լներիջի գործակիցը՝ կորուստները կապիտալից պարտավորությունների մեջ վերաբաշխման միջոցով:

Դեֆոլտի պարագայում կորուստները – (LGD – Loss Given Default)

Ակնհայտ է, որ եթե վարկը դեֆոլտում է, դա դեռ չի նշանակում, որ ամբողջ ֆինանսական ակտիվը կորած է: Հնարավորություն կա վերադարձնել ժամկետանց կատեգորիայում հայտնված ակտիվի որոշ մասը: Այս վերադարձումներըառավել բարձր են այն վարկերի պարագայում, որոնք գրավով ապահոված են՝ ի համեմատ նրանց, որոնք գրավի կամ երաշխավորության տեսքով ապահովություն չունեն: Բայց այս վերադարձումների մակարդակը նույնպես կարող է էականորեն տատանվել՝ կախված մակրոտնտեսական իրավիճակից և ֆինանսական ցիկլի տարբեր փուլերից: Այսպիսով, դեֆոլտից վերադարձումների միջինացված դրույքը կարելի է հաշվարկել՝ առավել մեծ կշիռ տալով ավելի մոտ վերադարձումներին: Բայց հենց ամեն ժամանակաշրջանի վերադարձումների և կորուստների դրույքի հաշվարկը հեշտ գործընթաց չէ:

Ստորև ներկայացված է կորուստների հաշվարկման մոտեցումը, որը թույլ կտա դեֆոլտների պարագայում կորուստները գնահատել առավել ճշգրիտ և խուսափել հաշվապահական հաշվառման սխալներից և պատմական տատանողականությունից:

1. Առաջին քայլը պատմական վիճակագրության վրա մարգինալ վերադարձումների դրույքի հաշվարկ է g տեսակի վարկերի համար:

Օգտվելով արդեն դեֆոլտի ենթարկված (90օրժամկետանց ունեցած) վարկերի պատմական վիճակագրությունից՝ հաշվարկվում է դեֆոլտից հետո $t-$րդ ժամանակաշրջանի ընթացքում սահմանային վերադարձումների չափը բանաձև 5-ի միջոցով:

$$MRR_{g,t}=\frac{\sum_{m=1}^{M-t}RR_{g,m,m+t}}{M-t} \qquad (5)$$

որտեղ

$\boldsymbol{g}$ – վարկի տեսակը/խումբն է,

$RR_{g,m,m+t}$ $-g$ տեսակի/խմբի m-րդ ամսին դեֆոլտի ենթարկված վարկի հետ վերադարձման դրույքն է դեֆոլտի ամսվանից t ամիս հետո և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$RR_{g,m,m+t} = \frac{MR_{g,m,m+t}}{EAD_{g,m}} = \frac{\sum_{i=1}^{N} MR_{i,g,m,m+t}}{\sum_{i=1}^{N} EAD_{i,g,m}} \quad (6)$$

որտեղ

$\boldsymbol{MR_{i,g,m,m+t}}$ – m-րդ ամսվա ընթացքում դեֆոլտ եղած i–րդ վարկի գծով վերադարձումների գումարն է դեֆոլտի ամսվան հաջորդող t-րդ ամսվա ընթացքում:

$\boldsymbol{EAD_{i,g,m}}$ – m-րդ ամսվա ընթացքում դեֆոլտ եղած i–րդ վարկի հաշվեկշռային արժեքն է դեֆոլտի պահին:

$\boldsymbol{N}$ – m-րդ ամսվա ընթացքում դեֆոլտ եղած վարկերի ընդհանուր քանակն է:

2. Հիմնվելով պատմական տվյալների վրա՝ կարելի է գնահատել m-րդ ամսվա ընթացքում դեֆոլտի ենթարկված $EAD_{g,m}$ գումարով վարկերի գծով դեֆոլտի ամսվան հաջորդող $t-$րդ ամսվա կանխատեսվող վերադարձումների չափը հետևյալ բանաձևով՝

$$FMR_{g,m,M+ft} = EAD_{g,m} * MRR_{g,M-m+ft+1} \quad (7)$$

որտեղ $ft = 1, \ldots .m-1,\ m > 1$ և նշանակում է ֆինանսական հաշվետվության ամսաթվին հաջորդող կանխատեսվող ամիսը:

3. Այսպիսով՝ հաշվարկվում է դեռևս դեֆոլտի չենթարկված վարկերի համար վերադարձումների դրույքը դեֆոլտի պարագայում:

$$RR_{g,non-default} = \frac{R_g + FR_g}{EAD_g} = \\ = \frac{\sum_{m=1}^{M}(\sum_{t=0}^{M-m} MR_{g,m,m+t}) + \sum_{m=1}^{M}(\sum_{ft=1}^{m-1} FMR_{g,m,M+ft})}{\sum_{m=1}^{M} EAD_{g,m}} \quad (8)$$

Համապատասխանաբար հաշվարկվում է նաև դեֆոլտի պարագայում կորուստների դրույքը, որը դեֆոլտի ենթարկված վարկային մնացորդի չվերականգնող մասն է և կարող է գնահատվել հետևյալ բանաձևով՝

$$LGD_{g,non-default} = 1 - RR_{g,non-default} \quad (9)$$

4. Հաշվարկվում է նաև արդեն դեֆոլտում հայտնված վարկերի վերադարձումների դրույքը ըստ դեֆոլտում գտնվելու ժամանակի տևողության: Դեֆոլտի ենթարկված վարկերի համար այս ժամանակային տարբերակումը կարևոր է, քանի որ արդեն վաղուց դեֆոլտում գտնվող

վարկերի գծով այլևս քիչ վերադարձումներ կարելի է ակնկալել: Այսպիտով՝ վերադարձումների դրույքը այն վարկերի համար, որոնք հայտնվել են դեֆոլտում k -ից $k+1$ ամիս մինչև հաշվետու ժամկետը, կարող է հաշվարկվել հետևյալ բանաձևով՝


$$RR_{g,k,default} = \frac{\sum_{t=k}^{M} MRR_{g,t}}{1-\sum_{t=0}^{k} MRR_{g,t}} \quad (10)$$

Եվ դեֆոլտի պարագայում կորուստի դրույքը հաշվետու ժամկետի՝ k -ից $k+1$ ամիսներ առաջ, դեֆոլտի ենթարկված վարկերի համար կլինի՝


$$LGD_{g,k,default} = 1 - RR_{g,k,default} \quad (11)$$

Եվ վերջում պետք է հաշվի առնել, որ վերադարձումների պատմական վիճակագրությունից նպատակահարմար է դուրս թողնել տույժերի և տուգանքների գծով հետ վերադարձումները: Չնայած առաջին հայացքից թվում է, որ տույժերի և տուգանքների գծով վերադարձումները հանդիսանում են փաստացի և անվիճելի կանխիկ մուտքեր տվյալ վարկերի գծով և ռիսկերի կառավարման տեսանկյունից հանդիսանում են ապագա կանխիկ մուտքեր, այս վերադարձումները արդեն իսկ հաշվապահորեն եկամուտ են ճանաչվել նախկին ժամանակաշրջաններում և ներկայում LGD գործակցի միջոցով հաշվարկելու դեպքում փաստացի կհաշվեգրվի կրկնակի եկամուտ: Այդ իսկ պատճառով նաև նպատակահարմար է EAD գումարի հաշվարկի միջից նույնպես վարկերի հաշվեկշռում հաշվարկված տույժերը ու տուգանքները բացառել հաշվարկից:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ վարկային ոչ մի ռեգիստր չի կարող տրամադրել իր ունեցած տվյալների բազան՝ բացառությամբ բանկերին տրամադրվող անհատական վարկային պատմությունների տվյալների: Օրենքում չկա նույնիսկ բացառություն ագրեգացված տվյալների ներկայացման համար: Միևնույն ժամանակ անհնարին է ՀՀ բոլոր բանկերի դեֆոլտի պարագայում պատմական կորուստների մակարդակի գնահատման հնարավորությունը:Այդ իսկ պատճառով այս հետազոտության շրջանակներում օգտագործվել է Մուդիս ընկերության կողմից հավաքագրած պատմական դեֆոլտի պարագայում վերադարձումների և կորուստների տարեկան կտրվածքով վիճակագրությունը (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. *Դեֆոլտի պարագայում կորուստների դինամիկան ըստ Moody's-ի*



Աղբյուր՝ *հեղինակի հաշվարկները հիմնված Moody's ընկերության տվյալների վրա [10]*

Ինչպես երևում է կորուստների դինամիկայից, LGD գործակիցը արտացոլում է ճգնաժամային բոլոր դրվագները. մասնավորապես կորուստների ավելացում է նկատվում 1998թ.-ի ճգնաժամի ժամանակ, 2002թ.-ի և 2008թ.-ի տնտեսական ճգնաժամերի ընթացքում, ինչպես նաև 2015թ.-ի նավթային ճգնաժամի արդյունքում:

Դեֆոլտի հավանականություն (PD – Probability of Default)

Դեֆոլտի հավանականության գնահատումը բավականին բարդ խնդիր է: Գոյություն ունեն անհատ կազմակերպությունների դեֆոլտի հավանականության գնահատման բազմակողմանի մեթոդներ: Օրինակ՝ Ալթմանի Z-պքորը [11], Մերթոնի [12] և ՔՄՎ (KMV Moody's) [13] սպասվող դեֆոլտի հաճախականության (Expected Default Frequency) մոդելները և այլ հաշվապահական տվյալների վրա հիմնված կառուցվածքային մոդելներ օգտագործվում են անհատական դեֆոլտի հավանականության գնահատման համար: Բայց այս մոդելների կիրառությամբ սպառողական, հիփոթեքային և փոքր բիզնես վարկերի դեֆոլտի հավանականությունը գնահատելը ժամանակատար է և անարդյունավետ: Որպեսզի հնարավոր լինի ամբողջ համակարգի համար դեֆոլտի հավանականության գնահատումը, անհրաժեշտ է խմբային գնահատում:

Ֆլորեսը և այլք [14] Մեքսիկայի օրինակի վրա բացահայտել են, որ ապագա դեֆոլտների ամենակարևոր ինդիկատորը ներկա պահին և

նախկինում կուտակված ժամկետանցների մասին ինֆորմացիան է, չնայած դեֆոլտները կանխատեսող այլ սուբյեկտիվ չափորոշիչներ էլ գոյություն ունեն, ինչպիսիք ենփոխկապակցված անձանց ժամկետանց օրերի կուտակումը, վարկերի վերակառուցումը և այլ ներքին տեղեկատվությունը, որը կարող է ազդել վարկային ռիսկի աճի վրա:

Ե՛վ Բազելյան կոմիտեն, և՛ ՖՀՄՍ խորհուրդը սահմանում են ֆինանսական գործիքների դեֆոլտը նույն կերպ [15, 16]: Դեֆոլտը սահմանվում է որպես 90 օր և ավել ժամկետանց օրերի կուտակում: Դեֆոլտի օր է համարվում 91 օր ժամկետանց դառնալու օրը: Համաձայն Ֆինանսական ակտիվների՝ ՖՀՄՍ-ի 30 օր ժամկետանց կետը համարվում է ինդիկատոր վարկային ռիսկի էական աճի համար: Այդ իսկ պատճառով այն ակտիվները, որոնք ունեն վարկային ռիսկի էական աճ, ունեն նաև դեֆոլտի առավել բարձր հավանականություն:

1. Կանխատեսվող դեֆոլտի հաշվարկի համար **առաջին քայլը** վարկերի ժամկետանցների քանակային տարեկան մատրիցաների կառուցումն է ամեն ամսվա վերջի դրությամբ: Տարեկան ժամկետանցների մատրիցան ամեն ամսվա համար ցույց է տալիս, թե ամսվա վերջի դրությամբ կոնկրետ խմբում առկա վարկերից քանակային ինչ տեղափոխություն է եղել ժամկետանց խմբերիմիջև (մարվել է, 0, 1–30, 31–90, 90+ ժամկետանց) մինչև մյուս տարվա նույն ամսվա վերջը:

Քանի որ մեկ տարին բավականին երկար ժամանակահատված է, հնարավոր է, որ վարկերը ենթարկվեն դեֆոլտի (կուտակեն 90 և ավել ժամկետանց օրեր) և հետո վերադառնան նորից ոչ ժամկետանցի կատեգորիա: Որպեսզի այսպիսի դեֆոլտները նույնպես ներգրավվեն հաշվարկի մեջ, մեկ անգամ դեֆոլտի ենթարկված վարկերը կմնան դեֆոլտի կատեգորիայում, և միաժամանակյա կուտակված առավելագույն ժամկետանց օրերի վիճակագրությունը կարող է օգտագործվել: Այսպիսի մոտեցումը կհստակեցնի նաև դեֆոլտի պարագայում կորուստների հաշվարկի մեթոդաբանությունը:

Ժամկետանցների միգրացիայի մատրիցան 4x6 է, որտեղ տողերը արտահայտում են ժամկետանց կատեգորիան վիճակագրական տարվա սկզբի պահին, իսկ սյունյակները՝ նրանց փոխադրումը ուրիշ կատեգորիա տարվա վերջին (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2*. Ֆինանսական ակտիվների դասակարգումը ըստ վարկային ռիսկի փուլերի*

Քանակների տարեկան անցումայինմատրիցա						
Ից / դեպի	**redeem**	**0**	**1-30**	**31-90**	**90+**	**Ընդամենը**
0	$Q_{0,R}$	$Q_{0,0}$	$Q_{0,1}$	$Q_{0,2}$	$\boldsymbol{Q_{0,D}}$	$Q_{0,T}$
1-30	$Q_{1,R}$	$Q_{1,0}$	$Q_{1,1}$	$Q_{1,2}$	$\boldsymbol{Q_{1,D}}$	$Q_{1,T}$
31-90	$Q_{2,R}$	$Q_{2,0}$	$Q_{2,1}$	$Q_{2,2}$	$\boldsymbol{Q_{2,D}}$	$Q_{2,T}$
90+	$Q_{D,R}$	$Q_{D,0}$	$Q_{D,1}$	$Q_{D,2}$	$\boldsymbol{Q_{D,D}}$	$Q_{D,T}$
Ընդամենը	$Q_{T,R}$	$Q_{T,0}$	$Q_{T,1}$	$Q_{T,2}$	$\boldsymbol{Q_{T,R}}$	Q_{T}

Աղբյուր*՝ հեղինակի հաշվարկները*

որտեղ

• $Q_{i,T}$-ն ցույց է տալիս, թե i-րդ տեսակի վարկերի մեջ քանի վարկ կար տարվա սկզբում, որտեղ i-ն ժամկետանց կատեգորիան է՝ 0, 1–30, 31–90 կամ 90+:

• $Q_{i,j}$–ն ցույց է տալիս, թե քանի հատ վարկ է տեղափոխվել i-րդ ժամկետանց կատեգորիայից տարվա սկզբին դեպի j-րդ ժամկետանց կատեգորիա մեկ տարի հետո նույն ամսվա վերջում:

• $\frac{Q_{i,j}}{Q_{i,T}}$ ցույց է տալիս վարկերի տեղաշարժը i-րդ ժամկետանց կատեգորիայից տարվա սկզբին դեպի j-րդ տարվա նույն ամսվա վերջը:

2. **Երկրորդ քայլը** հավանականությունների տարեկան անցումային մատրիցայի կառուցումն է (տե՛ս աղյուսակ 2.1):

Աղյուսակ 2.1*. Ֆինանսական ակտիվների դասակարգումը ըստ վարկային ռիսկի փուլերի*

Հավանականությունների տարեկան անցումայինմատրիցա						
Ից / դեպի	**redeem**	**0**	**1-30**	**31-90**	**90+**	**Ընդամենը**
0	$\frac{Q_{0,R}}{Q_{0,T}}$	$\frac{Q_{0,0}}{Q_{0,T}}$	$\frac{Q_{0,1}}{Q_{0,T}}$	$\frac{Q_{0,2}}{Q_{0,T}}$	$\frac{Q_{0,R}}{Q_{0,T}}$	**100%**
1-30	$\frac{Q_{1,R}}{Q_{1,T}}$	$\frac{Q_{1,0}}{Q_{1,T}}$	$\frac{Q_{1,1}}{Q_{1,T}}$	$\frac{Q_{1,2}}{Q_{1,T}}$	$\frac{Q_{1,D}}{Q_{1,T}}$	**100%**
31-90	$\frac{Q_{2,R}}{Q_{2,T}}$	$\frac{Q_{2,0}}{Q_{2,T}}$	$\frac{Q_{2,1}}{Q_{2,T}}$	$\frac{Q_{2,2}}{Q_{2,T}}$	$\frac{Q_{2,D}}{Q_{2,T}}$	**100%**
90+	$\frac{Q_{D,R}}{Q_{D,T}}$	0%	0%	0%	$\frac{Q_{D,D}}{Q_{D,T}}$	**100%**

Աղբյուր*՝ հեղինակի հաշվարկները*

Համաձայն վերը նշված դեֆոլտի և ռիսկերի էական աճի սահմանումների՝ աղյուսակ 2.1.-ի 5-րդ սյունակի տոկոսային արտահայտությունները ցույց են տալիս, թե նշված ամսվա վերջի դրությամբ յուրաքանչյուր կատեգորիայում եղած վարկերի որ մասն է մեկ տարվա ընթացքում ենթարկվել դեֆոլտի:

$\frac{Q_{0,D}}{Q_{2,T}}$ – դեֆոլտի դրույք 0 օր ժամկետանց վարկերի համար

$\frac{Q_{1,D}}{Q_{1,T}}$ – դեֆոլտի դրույք 1–30 օր ժամկետանց վարկերի համար

$\frac{Q_{2,D}}{Q_{2,T}}$ – դեֆոլտի դրույք 30–90 օր ժամկետանց վարկերի համար

Դեֆոլտի դրույքը այս մեթոդաբանությամբ հաշվարկելով կստանանք կոնկրետ պահի դրությամբ (point in time PD) 12 ամսվա համար դեֆոլտի հավանականություն յուրաքանչյուր ժամկետանց կատեգորիայի համար: Ամբողջ ցիկլի համար միջին դեֆոլտի հավանականություն հաշվելու համար օգտագործվում է պարզ թվաբանական միջինը:

$$\boldsymbol{PD_{TTC}}^{historic} – \text{միջին}\, \boldsymbol{PD_{PIT}}, \tag{12}$$

Այնուամենայնիվ, դեֆոլտի պատմական դրույքը չի ապահովում ամբողջական տեղեկատվությունը, թե ինչ է սպասվում ֆինանսական կազմակերպությունների բալանսում առկա ակտիվների հետ ապագայում: Արտաքին ազդակները, որոնք հնարավոր ազդեցություն կարող են ունենալ ապագա դեֆոլտների հաճախականության վրա, պետք է հաշվի առնել առաջընթաց դեֆոլտի հավանականության դրույքների հաշվարկի մեջ:

Աղյուսակ 3. *Ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստի հաշվարկը՝ ըստ ՀՀ ԿԲ-ի:*

Ակտիվի դասը	Դասակարգման օբյեկտիվ չափանիշ՝ ժամկետանց օրեր	Դրույք, ՀՀ դրամով ակտիվներ	Դրույք, Արտարժույթով ակտիվներ
Ստանդարտ	0 ժամկետանց	1% (առավելագույնը՝ 2%)	1% (առավելագույնը՝ 2%)
Հսկվող	[1,90)	10%	12%


		(առավելագույնը՝ 15%)	(առավելագույնը՝ 18%)
Ոչ ստանդարտ	[90, 180)	20% (առավելագույնը՝ 25%)	24% (առավելագույնը՝ 30%)
Կասկածելի	[180, 270)	50% (առավելագույնը՝ 70%)	60% (առավելագույնը՝ 85%)
Անհուսալի	270-ից ավել	100%	100%


Աղբյուր՝ *ՀՀ ԿԲ պահուստների ձևավորման կարգ[3] և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2 [17]:*

ՀՀ ԿԲ մեթոդաբանության համաձայն՝ հնարավոր կորուստների պահուստները ձևավորվում են ըստ ներկայացված ակտիվների դասակարգման և աղյուսակ 3-ում համապատասխան պահուստավորման դրույքի կիրառման: Այս մոտեցման կիրառությունը, թեև պարզ է, բայց ստեղծում է հաշվառման հավելյալ բարդություններ բանկերի համար: Հաշվի առնելով այն փաստը, որ պահուստների գնահատումը էական ազդեցություն է ունենում բանկերի շահույթի վրա՝ այս տարբերակված հաշվառումը դժվարություններ է ստեղծում բանկերի ռիսկերը գնահատելու գործընթացում:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկելու դեպքում կստացվի պահուստների հետևյալ դինամիկան (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3. *ՀՀ վարկերի դասակարգումը՝ ըստ ԿԲ-ի մեթոդաբանության*





Աղբյուր՝ *ՀՀ ԿԲ, պարբերականներ, «ՀՀ ԿԲ տարեկան վիճակագրական տեղեկագիր» 2004-2015 [18] և ՀՀ բանկերի ֆինանսական հաշվետվություններ [19]:*

3. Հաջորդ քայլը դեֆոլտի հավանականության հաշվարկն է՝ հիմնված չաշխատող վարկերի պատմական վիճակագրության և ՀՀ բանկերում հաշվարկված դեֆոլտի հավանականության պատմական տվյալների հիման վրա:

Մանրամասնորապես՝ գծային ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացվել են ՀՀ ում գործող կոմերցիոն բանկի և դեֆոլտի հավանականության մոդելի ԱՄՀ ֆինանսական կայունության ցուցանիշների չաշխատող վարկերի մակարդակի հետ փոխկապակցվածությունը և մակարդակը: Աղյուսակ 4-ում և աղյուսակ5-ում ներկայացված է պարզագույն գծային ռեգրեսիոն մոդելի միջոցով հաշվարկված մոդելը, որտեղ անկախ փոփոխական է հանդիսանում բանկի համապատասխանաբար 0 և 1–90 ժամկետանց կատեգորիաների վարկերի դեֆոլտի հավանականությունը, իսկ կախյալ փոփոխականը չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի 3-րդ և 7-րդ բացասական լագերով արժեքն է: Հաշվարկների համար օգտագործվել են 2008թ.-ի հունվարից մինչև 2018թ.-ի հունիսը ընկած ժամանակահատվածի ամսական տվյալները:

Աղյուսակ 4. *Դեֆոլտի հավանականության և չաշխատող վարկերի կապը՝0 ժամկետանց օրեր ունեցող վարկերի համար*

```
Time series regression with "ts" data:
Start = 2008(5), End = 2019(1)
Call:
dynlm(formula = L(PDGEN) ~ L(NPL, 4), data = tsd)
```

Residuals:
Min 1Q Median 3Q Max
-1.60866 -0.36231 -0.04832 0.37318 1.77311

Coefficients:
Estimate Std. Error t value Pr(>|t|)
(Intercept) -0.39833 0.15724 -2.533 0.0125 *
L(NPL, 4) 0.29667 0.02346 12.646 <2e-16 ***

Signif.codes: 0 '***' 0.001 '**' 0.01 '*' 0.05 '.' 0.1 ' ' 1

Residual standard error: 0.5354 on 127 degrees of freedom
Multiple R-squared: 0.5574, Adjusted R-squared: 0.5539
F-statistic: 159.9 on 1 and 127 DF, p-value: < 2.2e-16

Աղբյուր՝ *հեղինակի հաշվարկները. ԱՄՀ Ֆինանսական Կայունության գործակիցների [20] և ՀՀ բանկում հաշվարկված դեֆոլտի հավանականության միջև կապը*[2]։

Այսպիսով՝ 1 տարվա ընթացքում դեֆոլտի հավանականությունը 0 ժամկետանց և 1-90 օր ժամկետանց վարկերի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$PD_{0,t,1Y} = -0.39833 + 0.29667 * NPL_t \quad (13)$$

Որտեղ $PD_{0,t,1Y}$ – 0 ժամկետանց կատեգորիային վարկերի t – եռամսյակից սկսած 1 տարվա ընթացքում դեֆոլտում հայտնվելու հավանականությունն է:

NPL_t- t – եռամսյակին չաշխատող վարկերի կշիռն է ընդհանուր վարկերի մեջ:

Այսպիսով՝ 1 տարվա ընթացքում դեֆոլտի հավանականությունը 0 ժամկետանց և 1-90 օր ժամկետանց վարկերի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$PD_{1-90,t,1Y} = 24.99927 + 0.30769 * NPL_t \quad (14)$$

---

[2] Հեղինակին հասանելի են ՀՀ բանկերի կողմից առաջարկված մեթոդաբանությամբ հաշվարկված պատմական դեֆոլտի հավանականության տվյալներ, սակայն գաղտնիության նկատառումներով դրանց հրապարակումը հնարավոր չէ: Այնուամենայնիվ, հնարավոր է հրապարակել դեֆոլտի հավանականության պատմական տվյալների և այլ տնտեսական ցուցանիշների հետ կապը:

որտեղ $PD_{0,t,1Y}$ – 1-90 օր ժամկետանց կատեգորիայի վարկերի t – եռամսյակից սկսած 1 տարվա ընթացքում դեֆոլտում հայտնվելու հավանականությունն է:

Աղյուսակ 5. *Դեֆոլտի հավանականության և չաշխատող վարկերի կապը՝ 1-90 ժամկետանց օրեր ունեցող վարկերի համար:*

```
Time series regression with "ts" data:
Start = 2008(8), End = 2019(1)

Call:
dynlm(formula = L(PDOVERDUE) ~ L(NPL, 7), data = tsd)

Residuals:
    Min       1Q   Median       3Q      Max
-1.19651 -0.39167 -0.01042  0.43073  1.33756

Coefficients:
EstimateStd. Error t value Pr(>|t|)
(Intercept) 24.99927    0.17060   146.5   <2e-16 ***
L(NPL, 7)    0.30769    0.02544    12.1   <2e-16 ***
---
Signif. codes:  0 ‘***’ 0.001 ‘**’ 0.01 ‘*’ 0.05 ‘.’ 0.1 ‘ ’ 1

Residual standard error: 0.5805 on 124 degrees of freedom
Multiple  R-squared:  0.5412,    Adjusted R-squared:  0.5375
F-statistic: 146.3 on 1 and 124 DF,  p-value: < 2.2e-16
```

Աղբյուր՝ *հեղինակի հաշվարկները: ԱՄՀ Ֆինանսական Կայունության գործակիցների[20] և ՀՀ բանկում հաշվարկված դեֆոլտի հավանականության միջև կապը:*

NPL_t- t –ն եռամսյակին չաշխատող վարկերի կշիռն է ընդհանուր վարկերի մեջ:

Համաձայն մեթոդաբանական հենքի՝ հնարավոր է հաշվարկել 1 տարվա ընթացքում դեֆոլտի հավանականությունը: Հաջորդ քայլը ամբողջ վարկերի ամբողջ կյանքի ընթացքում դեֆոլտի հավանականության հաշվարկն է, որը կատարվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$PD_{t,LT} = 1 - (1 - PD_{t,1Y})^T \quad (15)$$

որտեղ $PD_{t,1Y}$ – վարկերի t–եռամսյակից սկսած 1 տարվա ընթացքում դեֆոլտում հայտնվելու հավանականությունն է: $PD_{t,LT}$ – վարկերի t–

եռամսյակից սկսած մինչև մարվելը դեֆոլտում հայտնվելու հավանականությունն է: Իսկ T-տարիների քանակն է (1,3,8)[21], որը հաշվարկվում է՝ ելնելով ՀՀ բանկային համակարգի վարկերի ժամկետայնությունից:

4. Հնարավոր կորուստների պահուստի կառուցման **չորրորդ քայլը** դեֆոլտի հավանականության պատմական տվյալների հիման վրա ապագայի սպասումներով դեֆոլտի հավանականության գնահատումն է: Բանկերի ակտիվների որակը և դեֆոլտի հավանականությունը մեծապես կախված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մակրոտնտեսական գործոններից: Այդ պատճառով ընտրվել է երեք հիմնական գործոն, որոնց միջոցով ճշգրտվում է դեֆոլտի հավանականությունը: ՀՆԱ-ի աճը, ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխությունը՝ որպես արտաքին գլխավոր գործոն, և վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ճեղքը: Որպես դեֆոլտի հավանականության մոտարկված ցուցանիշ օգտագործվել է ԱՄՀ հրապարակած ՀՀ-ում Չաշխատող Վարկերի հարաբերակցությունը ընդհանուր վարկերին:

Աղյուսակ 6. *Չաշխատող վարկերի գործակցի և մակրոտնտեսական պարամետրերի մոդելային կապը (logistic regression model):*

```
Time series regression with “ts” data:
Start = 2007(1), End = 2017(3)

Call: dynlm(formula = LOGODDSNPL ~ L(DCRGDPGAP, -5) +
L(DYEARLYGDPCHANGE,
   0) + L(LNUSDAMDCHANGE, -1), data = dat)

Residuals:
Min       1Q   Median      3Q      Max
-0.56884 -0.15387  0.01041  0.13955  0.45525

Coefficients:
                    Estimate Std. Error t value Pr(>|t|)
(Intercept)           -14.583      1.624  -8.978 4.94e-11 ***
L(DCRGDPGAP, -5)       -2.695      1.241  -2.172    0.036 *
L(DYEARLYGDPCHANGE, 0)  -7.213      1.568  -4.600 4.38e-05 ***
L(LNUSDAMDCHANGE, -1)   1.978      0.270   7.325 7.71e-09 ***
---
Signif.codes:  0 ‘***’ 0.001 ‘**’ 0.01 ‘*’ 0.05 ‘.’ 0.1 ‘ ’ 1

Residual standard error: 0.2202 on 39 degrees of freedom
Multiple R-squared: 0.7507,   Adjusted R-squared: 0.7315
F-statistic: 39.14 on 3 and 39 DF,  p-value: 7.644e-12
```

```
>summary(LNUSDAMDCHANGE)
Min.  1st Qu.Median    Mean 3rd Qu.    Max.
  5.711   5.908   6.010   6.003   6.171   6.192
>summary(DCRGDPGAP)
Min.1st Qu.Median       Mean    3rd Qu.       Max.
-0.0796773 -0.0221358  0.0038864 -0.0009891  0.0217247  0.0604967
>summary(DYEARLYGDPCHANGE)
Min.1st Qu.Median      Mean   3rd Qu.      Max.
-0.078519  0.009128  0.017775  0.017363  0.026186  0.066063
```

Աղբյուր՝ *հեղինակի հաշվարկները՝ հիմնված ԱՄՀ Ֆինանսական Կայունության գործակիցների [22] և ՀՀ բանկում հաշվարկված դեֆոլտի հավանականության միջև:*


Մոդելի արդյունքները համապատասխանում են սպասելիքներին: ՀՆԱ-ի աճի հետ մեկտեղ նաև լավանում է վարկային պորտֆելների որակը, իսկ ԱՄՆ դոլարի աճի հետ վարկերի որակը նվազում է: Վարկեր/ՀՆԱ ճեղքի գործակիցը նույնպես համապատասխանում է սպասելիքներին, քանի որ ճեղքի խորացումը կապվում է վարկերի որակի փատացման հետ, ինչպես նշված է Բազելյան կոմիտեի[23, 24] և Բորիոյի [25] վերլուծություններում: Հաշվարկված մոդելով գնահատված չաշխատող վարկերի գործակցի ($\widehat{NPL_t}$) և փաստացի չաշխատող վարկերի գործակցի (NPL_t) հարաբերակցության արդյունքում ստացվում է մակրոտնտեսական գործոնների ճշգրտման գործակիցը ամեն եռամսյակի համար՝

$$Macro\ Adj\ Factor_t = \frac{\widehat{NPL_t}}{NPL_t} \qquad (16):$$

Ստացվածգործակցովճշգրտվումէյուրաքանչյուրփուլիվարկերիփմբիդեֆոլտիհավանականությանգործ0ակիցը:Վերջնականստացվածգործակիցըկիրառվում է բանաձև 4.18-ում մակրոտնտեսական գործոններով ճշգրտված հնարավոր կորուստների պահուստը հաշվարկելու համար: Ստացված տվյալներով գնահատվել է 2004–2018թթ.-երի հնարավոր կորուստների պահուստը երեք փուլերի համար և համամատվել ԿԲ-ի մեթոդաբանությամբ հաշվարկված պահուստների հետ:

Դինամիկ պահուստավորման և ՀՀ ԿԲ-ի պահուստների համեմատություն

Գծապատկեր 4. *ՀՀ բանկային համակարգում դինամիկ պահուստավորման և ՀՀ ԿԲ պահուստավորման համեմատություն*




Աղբյուր *՝ հեղինակի հաշվարկներ:*

Այսպիսով, հաշվի առնելով տվյալների հասանելիության սահմանափակումները և մոտարկումները, այնուամենայնիվ հնարավոր է էական եզրակացություն անել: Դինամիկ պահուստավորման մոտեցման կիրառման պարագայում բանկային համակարգում հնարավոր կլինի կուտակել առավել մեծ ծավալով պահուստներ մինչճգնաժամային ժամանակահատվածում: Այս մոտեցման միջոցով հնարավոր է ավելի

հստակ և հիմնավորված տարբալուծել հնարավոր կորուստները, վեր-լուծել կորուստների փոփոխությունն ու ազդել դրանց վրա, ինչը իր հերթին համապատասխանում է ՖՀՄՍ 9 ստանդարտի նպատակներին:

Դինամիկ պահուստավորման մոդելը նաև հաստատում է ՀՀ բան-կային համակարգում ակտիվների որակի էական նվազման փաստը: Գծապատկեր 4ա-ից հստակ երևում է, որ դինամիկ պահուստավորման մոդելը օգնում է բանկային համակարգում կուտակել պահուստներ մինչև ճգնաժամային դրվագների ի հայտ գալը: Ըստ դինամիկ պահուստավոր-ման մոդելի՝ ՀՀ բանկային համակարգում 2008թ.-ի 2-րդ և 3-րդ եռամ-սյակների դրությամբ կլիներ կուտակած 33.5% և 75.5% ավել պահուստ՝ ՀՀ ԿԲ պահուստավորման համեմատ: Հատկանշական է, որ 2015թ.-ի ֆինանսական ճգնաժամի արդյունքում վարկերը հայտնվել են դեֆոլտում 2016թ.-ին (տե՛ս գծապատկեր 4բ): Դինամիկ պահուստավորման, հնարա-վոր կորուստների պահուստները հնարավորություն կստեղծեին կուտա-կել պահուստներ մինչև 2014թ.-ի վերջը և կուտակել պահուստներ ժամ-կետանցներ չունեցող առաջին փուլի վարկերի համար, որոնք արդյուն-քում հայտնվել են դեֆոլտում հաջորդ տարվա ընթացքում:

Գծապատկեր 5. *ՀՀ բանկային համակարգում դինամիկ պահուստի հաշվարկ*



Աղբյուր՝ *հեղինակի հաշվարկներ:*

Ինչպես երևում է գծապատկեր 5-ից, դինամիկ պահուստավորման կիրառումը ընդհանուր բանկային համակարգի համար թույլ կտա հնարավոր կորուստների բացասական ազդեցությունը նվազեցնելու համար ստեղծել պահուստներ առավել բարենպաստ պայմաններում, երբ տնտեսությունը բումի մեջ է, և օգտագործել կուտակված պահուստներ ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու համար:

Եզրակացություն

Այս հետազոտությունը արդյունքները ցույց են տալիս, որ դինամիկ պահուստավորման ստանդարտները կարող են նվազեցնել ֆինանսական կարգավորման պրոցիկլիկայնությունը որոշակի մակարդակով: Հնարավոր կորուստների պահուստը արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ ակտիվների հաշվեկշռային արժեքի աճը կանխելու համար: Երբ ֆինանսական աճի՝ վարկային պորտֆելների ընդլայնման ցիկլի ընթացքում ակտիվները ավելանում են առանց համապատասխան տնտեսական զարգացման, պահուստների գնահատման այս մեթոդը հնարավորություն է ստեղծում ճշգրիտ գնահատել ակտիվների իրական արժեքը՝ թույլ չտալով ապագա շահույթների անիրատեսական չափերի կանխատեսում և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի հաշվարկ՝ հաշվի առնելով ապագա հնարավոր կորուստները: Մոդելի առավելությունն այն է, որ առաջարկվող պահուստների կիրառությունների սահմանափակում դրամաշրջանառությունը և ճշգրտում է պահուստները, կապիտալի, շահույթի և ակտիվների մակարդակը միայն հաշվապահական և ռիսկերի գնահատման նպատակներով:

Առաջարկվել է դինամիկ պահուստավորման մեթոդաբանություն, որն ունի հետևյալ առավելությունները. հնարավոր կորուստների պահուստները կուտակվում են տնտեսական վերընթացի ժամանակ և օգտագործվում վարընթաց ցիկլի ժամանակ՝ նվազեցնելով հակացիկլայնությունը, պարզ է և կիրառության տեսանկյունից չի ենթադրում գործառնական էական ծախսեր, համապատասխանում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և կազատի բանկերին երկակի հաշվառման վարման անհրաժեշտությունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Borio, C., Furfine C. and Lowe P.* Procyclicality of the financial system and financial stability: Issues and policy options in – Marrying the macro- and micro-prudential dimensions of financial stability. BIS Papers, 2001, March, № 1. PP. 1–57.
2. *Saurina J. and Trucharte C.* The countercyclical provisions of the Banco de España (2000–2016). Bank of Spain. 2017.
3. Ըստ ՖՀՄՍ 9-ի՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ փուլերի, որը հիմնված է վարկային ռիսկի չափի վրա: Ifrs.org. IFRS 9 Financial Instruments 24 Jul 2014.Available at: https://www.ifrs.org/issued-standards/list-of-standards/ifrs-9-financial-instruments/ [Accessed 21 Jan. 2019].
4. *Valverde S. and Rodriguez-Fernandez F.* Do Banks Game on Dynamic Provisioning? // Journal of Financial Management, Markets and Institutions, 2018, 06(01). PP. 1–22.
5. Ըստ ՖՀՄՍ 9-ի՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ փուլերի, որը հիմնված է վարկային ռիսկի չափի վրա: Ifrs.org. IFRS 9 Financial Instruments 24 Jul

2014.Available at: https://www.ifrs.org/issued-standards/list-of-standards/ifrs-9-financial-instruments/ [Accessed 21 Jan. 2019].
6. BIS, Basel Committee on Banking Supervision, 2016. Guidelines Prudential treatment of problem assets – definitions of non-performing exposures and forbearance Consultative Document, Issued for comment by 15 July 2016. PP. 1–38.
7. BIS, 2017. Basel III: Finalising post-crisis reforms". Basel Committee on Banking Supervision, December 2017. PP. 1–158.
8. Ըստ ՖՀՄՍ 9-ի՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ փուլերի, որը հիմնված է վարկային ռիսկի չափի վրա: Ifrs.org. IFRS 9 Financial Instruments 24 Jul 2014.Available at: https://www.ifrs.org/issued-standards/list-of-standards/ifrs-9-financial-instruments/ [Accessed 21 Jan. 2019].
9. *Flores J.A.E., Basualdo T.L. and Sordo A.R.Q.* Regulatory use of system-wide estimations of pd, lgd and ead. BIS, Financial Stability Institute, 2010. PP. 1–68.
10. Moody's, Annual Default Study: Corporate Default and Recovery Rates, 1920–2017, Moody's 2018.
11. *Altman E.* 1968. Financial Ratios, Discriminant Analysis and the Prediction of Corporate Bankruptcy // Journal of Finance, September 1968, PP. 589–609.
12. *Merton R.C.* An Intertemporal Capital Asset Pricing Model // Journal of the Econometric Society, 41(5),1973. PP. 867–887.
13. *Crosbie P. and Bohn J.*, 2003. Modeling Default Risk, Moody's KMV White Paper, (San Francisco: Moody's Investor Service) December 18. PP. 1–31.
14. *Flores J.A.E., Basualdo T.L. and Sordo A.R. Q.* Regulatory use of system-wide estimations of pd, lgd and ead. BIS, Financial Stability Institute,2010. PP. 1–68.
15. BIS, Basel Committee on Banking Supervision, 2016. Guidelines Prudential treatment of problem assets – definitions of non-performing exposures and forbearance. Consultative Document, Issued for comment by 15 July 2016. PP. 1–38.
16. BIS, 2017. Basel III: Finalising post-crisis reforms. Basel Committee on Banking Supervision, December 2017. PP. 1–158.
17. ՀՀ ԿԲ, «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2: 2007 թ. N 39-Ն:
18. ՀՀ ԿԲ, Պարբերականներ, «ՀՀ ԿԲ տարեկան վիճակագրական տեղեկագիր», 2004–2015:
19. ՀՀ բանկերի ֆինանսական հաշվետվություններ, 2015–2018:
20. IMF Financial Soundness Indicators FSI, http://data.imf.org/?sk=51B096FA-2CD2-40C2-8D09-0699CC1764DA
21. ՀՀ բանկերի ֆինանսական հաշվետվություններ, 2015–2018:
22. IMF Financial Soundness Indicators FSI, http://data.imf.org/?sk=51B096FA-2CD2-40C2-8D09-0699CC1764DA
23. BIS, Basel Committee on Banking Supervision, 2016. Guidelines Prudential treatment of problem assets – definitions of non-performing exposures and forbearance: Consultative Document, Issued for comment by 15 July 2016. PP. 1–38.
24. BIS, 2017. Basel III: Finalising post-crisis reforms. Basel Committee on Banking Supervision, December 2017.PP. 1–158.
25. *Borio, C., Furfine C. and Lowe P.* Procyclicality of the financial system and financial stability: Issues and policy options in – Marrying the macro- and micro-prudential dimensions of financial stability. BIS Papers, 2001 March,№ 1. PP. 1–57.

МАКРОПРУДЕНЦИАЛЬНЫЕ ИНСТРУМЕНТЫ ПО ЧАСТИ АКТИВОВ И КАПИТАЛА: ДИНАМИЧЕСКОЕ РЕЗЕРВИРОВАНИЕ И ПРОЦИКЛИЧНОСТЬ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ РА

Р.Л. Гаспарян

АННОТАЦИЯ

Снижение процикличности является одной из основных задач реформы финансовой архитектуры. Динамическое резервирование возможных потерь по финансовым активам является эффективным макропруденциальным инструментом по части активов и капитала, что дает возможность снизить существущий риск процикличности в банковской системе РА.

Ключевые слова: банк, резерв, дефолт, риск, финансовая стабильность.

ASSET AND CAPITAL SIDE MACROPRUDENTIAL TOOLS: DYNAMIC PROVISIONING AND PROCYCLICALITY INTHE BANKING SYSTEM OF RA

R. Gasparyan

ABSTRACT

The decrease of procyclicity is one of the main challanges of the reform in the financial arhitechture. Dynamic provisioning for the expected credit losses of financial assets is an efficient asset and capital side macroprudentialtool that gives an opportunity to decrease the existing risk of procyclicity in the banking systemof RA.

Key words: bank, reserve, default, risk, financial stability.

ՄԻՋՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

Տ.Ա. Հակոբյան

УДК 352

Поступила: 25.02.2019г.
Сдана на рецензию: 26.02.2019г.
Подписана к печати: 23.03.2019г.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
tatevhakobyan04@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Միջմունիցիպալ համագործակցության իրականացման եղանակի վրա հիմնականում ազդում են մի շարք գործոններ՝ համագործակցության նպատակը, տվյալ երկրին ու տարածաշրջանին բնորոշ առանձնահատկությունները՝ պետական կառավարման համակարգը, մունիցիպալիտետների համագործակցությունը կարգավորող և խթանող օրենսդրությունը: Կախված այդ գործոններից՝ ձևավորվել են միջմունիցիպալ համագործակցության տարբեր կառուցակարգերը, որոնց բնորոշ առանձնահատկություններն ու համեմատական վերլուծությունը ներկայացված են այս հոդվածում:

Հիմնաբառեր՝ տեղական ինքնակառավարում, մունիցիպալիտետ, պետական կարգավորում, միջմունիցիպալ համագործակցություն, ֆորմալ և ոչ ֆորմալ համագործակցություն, միջմունիցիպալ մարմին:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում մունիցիպալիտետների համագործակցությունն ունի միայն տվյալ երկրին բնորոշ առանձնահատկություններ, սակայն, ընդհանրացնելով, կարող ենք առանձնացնել դասակարգման հիմնական չափանիշներն ու մունիցիպալիտետների համագործակցության տեսակներն ու ենթատեսակները, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. *Միջմունիցիպալ համագործակցության հիմնական ձևերը:*

Դասակարգման չափանիշ	Միջմունիցիպալ համագործակցության ձևեր	Բնորոշ գծեր
	ինտեգրվածության բարձր մակարդակ ունեցող	կայունության և պետական

<table>
<tr><td rowspan="3">Ըստ ինտեգրվածության մակարդակի</td><td colspan="3"></td><td>կարգավորման բարձր մակարդակ</td></tr>
<tr><td colspan="3">ինտեգրվածության ցածր մակարդակ ունեցող</td><td>ճկունության և մունիցիպալիտետների ինքնուրույնության բարձր մակարդակ</td></tr>
<tr><td colspan="3">ինտեգրվածության միջին մակարդակ ունեցող</td><td>կայունություն և ճկունություն</td></tr>
<tr><td rowspan="2">Ըստ նպատակների քանակի</td><td colspan="3">Մեկ նպատակ ունեցող</td><td>Մեկ նպատակի վրա կենտրոնացում</td></tr>
<tr><td colspan="3">Երկու և ավելի նպատակ ունեցող</td><td>Փոխկապակցված խնդիրների լուծում</td></tr>
<tr><td rowspan="4">Ըստ բարդության</td><td colspan="3">Ոչ ֆորմալ</td><td>Կարճաժամկետ խնդիրների լուծման ճկուն, բայց ոչ կայուն տարբերակ</td></tr>
<tr><td rowspan="3">Ֆորմալ</td><td rowspan="2">Պայմանագիր</td><td>Պետական-պետական</td><td>Լիազորությունների կատարում համատեղ ուժերով</td></tr>
<tr><td>Պետական-մասնավոր</td><td>Հանրային ծառայությունների մատուցման մասնագիտական բարձր մակարդակ</td></tr>
<tr><td colspan="2">Միջմունիցիպալ մարմնի ստեղծում</td><td>Կայունություն մունիցիպալիտետների հիմնական երկարաժամկետ լիազորությունների կատարման գործում</td></tr>
</table>

Աղբյուրը՝ *կազմված է հեղինակի կողմից:*

Բարձր ինտեգրվածության մակարդակ ունեցող միավորումների ստեղծման նախաձեռնողը հիմնականում կենտրոնական իշխանությունն է, որն օգտվում է միջմունիցիպալ համագործակցության պարտադիր սկզբունքից: Այն դեպքում, երբ մունիցիպալիտետներն ի վիճակի չեն լինում կատարել պատվիրակված լիազորությունները և միևնույն ժամանակ չեն օգտագործում համագործակցության հնարավորությունը, նրանց

համագործակցության վերաբերյալ որոշումը ընդունվում է կենտրոնական իշխանությունների կողմից՝ օրենքով իրենց վերապահված իրավունքով: Կենտրոնական իշխանությունների նախաձեռնությամբ ձևավորված միջմունիցիպալ կազմավորումներն ունենում են ինտեգրվածության բարձր մակարդակ և նմանվում են տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակի: Դրանք ունեն իրավական կարգավիճակ, ինչպես նաև բազմանպատակ լիազորություններ՝ ռազմավարական հարցերի լուծման համար: Ունեն ամուր քաղաքական կառուցվածք, ֆինանսական կայություն, նույնիսկ որոշումների ընդունման և սեփական հարկահավաքման իրավունք [1]: Իրենց իրավասության տակ ունենալով բավական մեծ լիազորություններ և ռեսուրսներ՝ այս մարմինները անդամ մունիցիպալիտետների վերաբերյալ որոշումներ են ընդունում: Արդյունքում սահմանափակվում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնավարությունը, բայց միևնույն ժամանակ ապահովվում է կառուցվածքային և ֆինանսական կայունություն կոնկրետ հարցերի լուծման համար: Այսպիսի միջմունիցիպալ մարմիններ ձևավորվել են Ֆրանսիայում, որտեղ 1966թ. պետության նախաձեռնությամբ ձևավորվեցին սեփական հարկահավաքմամբ քաղաքային միությունները: Ոլորտը կարգավորող հիմնական օրենքը Շևենմանի օրենքն [2] է՝ ընդունված 1999թ.-ին: Այս օրենքով քաղաքային միություններին ավելացան ագլոմերացիոն միությունները, որոնց հիմնական նպատակը ռազմավարական կարևոր խնդիրների լուծումն է, օրինակ, մունիցիպալիտետների տնտեսական և տարածքային զարգացումը, բնակելի միջավայրի սոցիալական հավասարակշռությունն ու քաղաքների զարգացման քաղաքականությունը: Պարզ է, որ այսպիսի միությունների կազմում ընդգրկվում են հիմնականում քաղաքային մունիցիպալիտետները, որոնք ունեն բավարար ռեսուրսներ ռազմավարական խնդիրների լուծման և հարկահավաքման կազմակերպման համար:

Երկրորդ մոդելի հիմքում համագործակցության կամավոր սկզբունքն է, երբ համագործակցության վերաբերյալ որոշում ընդունելիս մունիցիպալիտետներն ազատ են, ինքնավար և ճկուն: Մունիցիպալիտետների կամավոր համագործակցության արդյունքում ձևավորվում է տարածքային մարմին՝ առանց մշտական, անկախ ինստիտուցիոնալ կարգավիճակի [3]: Այս դեպքում մունիցիպալիտետների համագործակցության համար ստեղծվում է անհրաժեշտ օրենսդրական դաշտը, որը թույլ է տալիս մունիցիպալիտետներին ինքնուրույն որոշում կայացնել կամավոր համագործակցության վերաբերյալ և իրականացնել այն: Ի տարբերություն առաջին մոդելի՝ այստեղ պահպանվում է ճկունությունն

ու մունիցիպալիտետների ինքնավարությունը, սակայն ցածր է կայունության մակարդակն ու նպատակներին հասնելու երաշխիքը:

Երկրների մեծ մասում գործում է միջմունիցիպալ համագործակցության երրորդ մոդելը, որն ունի առաջինի կայունությունն ու երկրորդի ճկունությունը: Այս դեպքում համատեղում են ձևական և ոչ ձևական, ինտեգրված և ճկուն համագործակցության տարրերը՝ ապահովելու համար մի կողմից կայունությունը, իսկ մյուս կողմից՝ ճկունությունը:

Հաջորդ չափանիշը համագործակցության նպատակների քանակն է, ըստ որի մունիցիպալիտետները կարող են համագործակցել մեկ նպատակի կամ երկու և ավելի նպատակների հասնելու նպատակով. ընդ որում, գնալով աճում են բազմանպատակ համագործակցությունների թիվը: Իսպանիայում պատմականորեն ձևավորվել են մեկ նպատակ ունեցող մարմիններ, բայց 1980-ականներից սկսած բազմանպատակ համագործակցությունների քանակը արագ աճեց և 2005 թվականին հավասարվեց միանպատակ համագործակցող մարմիններին [4]: Հաշվի առնելով, որ կան մունիցիպալիտետների կողմից մատուցվող ծառայություններ, որոնք սերտ կապված են միմյանց հետ, օրինակ՝ տարեց մարդկանց և հաշմանդամների օգնությունը, հրշեջ և շտապ օգնության ծառայությունը՝ պարզ է դառնում, որ ավելի արդյունավետ է մեկ համագործակցության շրջանակներում ներառել մեկից ավելի նպատակ և խուսափել նոր համագործակցության համար անհրաժեշտ ծախսերից:

Դասակարգման հաջորդ չափանիշը համագործակցության նպատակի բարդությունն է, որից էլ կախված միջմունիցիպալ համագործակցությունը կարող է լինել ոչ ֆորմալ և հիմքում ունենալ պարզ համաձայնություն կամ էլ լինել ամբողջովին կարգավորված և նույնիսկ ընդգրկել միջմունիցիպալ համագործակցության իրականացման համար ձևավորված մարմիններ: Համագործակցության այս երկու տարբերակները միասին են կիրառվում. համաձայնությունը՝ պարզ և կարճաժամկետ խնդիրների լուծման, իսկ ֆորմալ տարբերակը՝ մշտական ծառայությունների մատուցման համար:

Մունիցիպալիտետները թեթև հարցերի լուծման համար ձեռքսեղմամբ են գալիս համաձայնության: Սա համագործակցության ոչ ձևական տարբերակն է: Այն չի պահանջում իրավական հիմք, քանի որ չի ենթադրում պարտադիր իրավական որոշում [5, 6]:

Այն դեպքում, երբ մունիցիպալիտետները պետք է միասին լուծեն ավելի բարդ և կարևոր հարցեր, ինչպիսիք են բնակիչներին հիմնական ծառայությունների մատուցումը, համագործակցությունը պետք է ունենա

կարգավորվածության բարձր մակարդակ: Ձևական համագործակցությունն իր հերթին կարող է հիմքում ունենալ պայմանագրային համաձայնությունը կամ միջմունիցիպալ մարմնի ստեղծումը:

Պայմանագրային համագործակցության հիմքում մունիցիպալիտետների միջև կնքված պայմանագիրն է, որը կարող է լինել ծառայության համատեղ մատուցման կամ ծառայության փոխանցման վերաբերյալ: Համատեղ համաձայնության դեպքում համայնքները միասին են աշխատում խնդրի լուծման համար, իսկ երկրորդ դեպքում համայքների միջև կնքված պայմանագրով մի մունիցիպալիտետ որոշակի վճարի դիմաց փոխանցում է որևէ ծառայության մատուցումը մեկ այն մունիցիպալիտետի: Վերջին տարբերակը գործում է նաև Հայաստանում: 2006 թվականի հունվարի 1-ից [7] գույքահարկի, իսկ 2009 թվականի հունվարի 1-ից [8] հողի հարկի բազաների վարումն անցավ տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ մի շարք գյուղական համայնքներ չունեին ռեսուրսներ այդ աշխատանքները կատարելու համար: Արդյունքում ձևավորվեցին միջհամայնքային կառույցները: Որպես միջհամայնքային կառույց հանդես է գալիս մի համայնք, որը պայմանագրի հիման վրա իրականացնում է մյուս համայնքների հարկերի բազաների վարումը: Սա բավական արդյունավետ է հատկապես գյուղական փոքր մունիցիպալիտետների համար, որոնք չունեն բավարար ֆինանսական, տեխնիկական, մասնագիտական ռեսուրսներ աշխատանքները իրականացնելու համար և կարող են դա փոխանցել այլ մունիցիպալիտետի:

Տարբերում ենք պայմանագրային համագործակցության պետական-պետական և պետական-մասնավոր ձևերը: Առաջինի դեպքում մի քաղաքապետարան գնում է ծառայությունը հարևանից կամ ներգրավված անդամների միջև տեղի է ունենում ծառայությունների փոխանակում՝ ըստ համաձայնության: Պատմականորեն ուժեղ և ինքնուրույն մունիցիպալիտետներ ունեցող երկրներում տարածված են հատուկ նշանակության մունիցիպալիտետները, որոնք ծառայություններ են մատուցում մեծ մեգապոլիսներին կամ մի քանի մունիցիպալիտետների միաժամանակ: Օրինակ, ԱՄՆ-ում մունիցիպալիտետների մեկ երրորդը հատուկ մունիցիպալիտետներ են կամ դպրոցական մունիցիպալիտետներ, որոնք ապահովում են կրթությունը, տրանսպորտը, ջրային ռեսուրսների և թափոնների կառավարումը, տնտեսական զարգացումն ու այլ ծառայություններ [9]: Արդյունքում այդ մունիցիպալիտետներից յուրաքանչյուրը մասնագիտանում է որևէ կոնկրետ ծառայության մատուցման գործում և ապահովում է մատուցվող ծառայությունների որակական հավասարությունը բոլորի համար:

Պետական-մասնավոր համագործակցության դեպքում պայմանագիրը կարգավորում է տեղական մարմինների կողմից մատուցվող հանրային ծառայությունների աութսորսինգ մասնավոր ընկերություններին:

Այսպիսով պարզ է դառնում, որ այն երկրները, որտեղ գործում է պետական կառավարման արդիականացված ձևը, անցում են կատարում համագործակցության ավելի թեթև, քիչ ինտեգրված եղանակներին: Պայմանագրային համաձայնության դեպքում մունիցիպալիտետները խուսափում են կազմակերպության ստեղծելու և դրա գործունեությունը ապահովելու համար կատարվող մի շարք ծախսերից: Տնտեսական արդյունավետություն ստացվում է նաև հանրային ծառայությունների աութսորսինգից մասնավոր հատվածին: Տեղական մարմինները կարող են ակնկալել օգուտներ այդպիսի համագործակցությունից, եթե համատեղեն իրենց ջանքերը և կարողանան բանակցել մասնավոր հատվածի հետ: Հիմնականում այդպիսի համագործակցությունը իրականացվում է մեծածավալ արտադրության ոլորտներում, որտեղ արդյունավետությունը բարձր է:

Չնայած նրան, որ միջմունիցիպալ մարմնի ստեղծումը հիմնականում բնորոշ է բարձր ինտեգրվածության մակարդակ ունեցող համագործակցությանը, որը կարգավորվում է կենտրոնական իշխանության կողմից, մունիցիպալիտետները ինքնուրույն նախաձեռնում են միջմունիցիպալիտետային մարմնի ստեղծումը, երբ խոսքը վերաբերում է մունիցիպալիտետների կողմից մատուցվող մշտական ծառայություններին, ինչպիսիք են թափոնների վերացումը, հրշեջ ծառայությունը, շրջակա միջավայրի պահպանությունը: Այս դեպքում ֆունկցիոնալ մարմնի ստեղծումն ապահովում է բարձր կայունություն երկարաժամկետ համագործակցության համար:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ ժամանակի պահանջով մունիցիպալիտետների միջև համագործակցության գործընթացը դառնում է ավելի ճկուն, ինչը պարտադիր է արագ արձագանքելու համար կատարվող փոփոխություններին, որոնց արդյունքում էլ ձևավորվում են մունիցիպալիտետների համագործակցության նոր և առավել արդյունավետ տարբերակներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Council of Europe (CoE), the United Nations Development Programme (UNDP) and the Local Government Initiative (LGI) of the Open Society, Inter-municipal cooperation, toolkit Manual, 2010.
2. LOI no 99-586 du 12 juillet 1999, Relative au renforcement et à la simplification de la cooperation intercommunale.

3. *Sharpe L.J., ed. Chichester,* The future of metropolitan government. In The government of world cities:The future of the metro model, John Wiley & Sons Ltd., 1995. P. 12.
4. Council of Europe (2007) Good practices in intermunicipal cooperation in Europe. Report of the European Committee on Local and Regional Democracy (CDLR). P. 39.
5. Council of Europe (CoE), the United Nations Development Programme (UNDP) and the Local Government Initiative (LGI) of the Open Society, Inter-municipal cooperation, toolkit Manual, 2010.
6. LOI no 99–586 du 12 juillet 1999, Relative au renforcement et à la simplification de la cooperation intercommunale.
7. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ընդունվել է 03.12.2003-ին):
8. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (ընդունվել է 28.11.2006-ին):
9. *Slack E.* Managing the Coordination of Service Delivery in Metropolitan Cities: The Role of Metropolitan Governance.The World Bank Finance Economics and Urban Development Urban Development Unit, 2007. P. 23.

РАМКИ МЕЖМУНИЦИПАЛЬНОГО СОТРУДНИЧЕСТВА

Т.С. Акопян

АННОТАЦИЯ

Метод межмуниципального сотрудничества обусловлен рядом факторов, основными из которых являются цель сотрудничества и особенности, характерные для данной страны и региона: система государственного управления, законодательство, регулирующее и способствующее сплочению сообщества. В зависимости от этих факторов сформированы различные механизмы межмуниципального сотрудничества, особенности и сравнительный анализ которых представлены в данной статье.

Ключевые слова: местное самоуправление, муниципалитет, государственное регулирование, межмуниципальное сотрудничество, формальное и неформальное сотрудничество, межмуниципальный орган.

FRAMEWORK OF INTERMUNICIPAL CO-OPERATION

T. Hakobyan

ABSTRACT

The method of inter-municipal cooperation is conditioned by a number of factors, the main being the goal of cooperation and the characteristics specific to a given country and region: the system of government, legislation regulating and promoting cooperation. Depending on these factors, various inter-municipal cooperation mechanisms are formed, the features and comparative analysis of which are presented in this article.

Keywords: local self-government, municipality, state regulation, intermunicipal cooperation, formal and informal cooperation, intermunicipal body.

ПСИХОЛОГИЯ

ПРОФЕССИОНАЛЬНОЕ РАЗВИТИЕ ЛИЧНОСТИ В АСПЕКТЕ СИНЕРГЕТИЧЕСКОЙ АКМЕОЛОГИИ

УДК 378.018.46

Поступила: 02.04.2019г.
Сдана на рецензию: 03.04.2019г.
Подписана к печати: 17.05.2019г.

Т.В. Башкирева[1], А.С. Берберян[2], А.В. Башкирева[3], Э.С. Берберян[4]

Рязанский государственный университетим. С. Есенина[1],
Российско-Армянский университет[2],
Рязанский государственный университетим. С. Есенина[3],
Национальный исследовательский университет, Высшая школа экономики[4]
t.bashkireva@rsu.edu.ru[1], aspsy@inbox.ru[2], bashkireva32@gmail.com[3], hermpsy@mail.ru[4]

АННОТАЦИЯ

На современном этапе нестабильности развития общества и в условиях глобализации моделирование психолого-педагогической поддержки развития профессионально востребованных психологических качеств личности приобретает особую актуальность. Если рассматривать формирование уровней профессионального развития в аспекте синергетической акмеологии, то в условиях организации психолого-педагогического сопровождения студент учится саморазвитию, самообразованию и самоорганизации.

Ключевые слова: личность, профессиональное развитие, синергетическая акмеология, фрактальный детерминизм, линейный детерминизм.

В литературе вклад в понимание смысла «личности» внесли советские классики психологии: Б.Г. Ананьев, А.В. Петровский, А.Г. Ковалев, В.Н. Мясищев, К.К. Платонов и другие. В профессиональном развитии человека отмечаются некоторые противоречия, связанные с понятиями «личность» и «субъект» [1]. Это связано с этапами, которые человек проходит в освоении профессиональной деятельности. Л.С. Рубинштейн в своих работах, сохранившихся в архивах, не проводит четких различий между понятиями «субъект» и «личность».

Н.В. Кузьмина в профессиональном развитии педагога выделяет уровни [2]: 1) репродуктивный – умеет пересказать другим то, что знает сам; 2) адаптивный – умеет приспособить свое сообщение к особенностям слушателей; 3) локально-моделирующий – владеет стратегиями формирования знаний у обучающихся; 4) системно-моделирующий – владеет стратегиями формирования системы знаний, умений, навыков у учащихся; 5) системно-моделирующий творчество – «владеет стратегиями превращения своего предмета в средство формирования творческой личности, способной к нравственной устойчивости, самообразованию, самоорганизации, самоконтролю, т.е. к саморазвитию в новых, не контролируемых условиях» [3]. По мнению автора, именно такого педагога можно считать достигшими вершин профессионализма, но при условии самосовершенствования, саморазвития. Если экстраполировать данные уровни в любой профессиональной деятельности, то первые четыре – связаны с развитием субъектности и только пятый уровень – это уровень профессионализма личности. В данном случае исследователь рассматривает профессиональное развитие личности с позиции принципа линейного детерминизма.

Акмеологическое сопровождение профессиональной деятельности человека в современных условиях глобализации является чрезвычайно актуальным. «Акмеология как новое научное направление имеет основной принцип вершинности, т.е. устремление в будущее, что способствует выработке целеполагания личности и формированию позитивного социального идеала» [4]. Личность стремится к прогнозированию своего профессионального будущего, и в этом случае недостаточно использования принципа линейного детерминизма, обусловленного причинно-следственными связями.

